

ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԷ՝ ՏՄԻԻ, 2008, ԹԻԻ 12 (318) VOL. XXVII N° 12 السنة السابعة والعشرون - العدد الثانية العشر



Հ.Մ.Ը.Մ.Ի

90ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱԼԷՊ ԵՒ ՄՈՆԹՐԷԱԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ամիսներում, Ներկայացուցչական իրենց ժողովները գումարեցին եւ նոր Շրջանային Վարչութիւններով օժտուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Արեւմտեան Ս. Նահանգներու շրջանները:

Լոնտոնի, Վիեննայի եւ Փարիզի մասնաճիւղերը, իրենց կարգին, գումարեցին անդամական ընդհանուր ժողովներ եւ ընտրեցին նոր վարչութիւններ:

Ստորեւ նորընտիր կազմերը՝ իրենց անդամներու աշխատանքային բաժանումներով:

● Հ.Մ.Ը.Մ. ՍՈՒՐԻԱ

Եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան-Ատենապետ
Քոյր Ալին Գիրիւմլեան-Ատենադպրուհի
Եղբ. Շահէ Չաղլասեան-Գանձապահ եւ պետական վարչութեան կապ

Եղբ. Լեւոն Իսկէնտէրեան-Յաշուապահ եւ տեղական վարչութեան կապ

Եղբ. Արտո Փայասեան-«Մարզիկ»ի եւ Քեսապի մասնաճիւղի կապ

Եղբ. Արմէն Քէօշկէրեան-Գոյքապահ եւ Շրջ. Սկ. Խորհուրդի կապ

Եղբ. Յարո Տէյիւրմէնճեան-Լաթաքիոյ մասնաճիւղի ներկայացուցիչ

Եղբ. Սկրտիչ Գրիգորեան-Գամիշլիի մասնաճիւղի ներկայացուցիչ

Եղբ. Սարգիս Պասմաճեան-Դամասկոսի մասնաճիւղի ներկայացուցիչ

● Հ.Մ.Ը.Մ. ԱՐԵՎՄԵԱՆ Ս. ՆԱՅԱՆԳՆԵՐ

Եղբ. Սթիւ Արթինեան-Ատենապետ եւ կեդրոնի յանձնախումբի ներկայացուցիչ

Եղբ. Յովիկ Պետեւեան-Փոխ ատենապետ եւ աշխատանքները հետապնդող (action items)

Քոյր Մարո Քէշիշեան-Ատենադպիր, դաստիարակչական յանձնախումբի ներկայացուցիչ եւ հանրային կապի յանձնախումբի օգնական

Քոյր Ռիմա Աբէղի-Սաղրեան-Գանձապահ

Եղբ. Թովմաս Տէօքմէճեան-Յաշուապահ եւ հանրային կապի ներկայացուցիչ

Եղբ. Ժանօ Քահվէճեան-Մարզական Խորհուրդի ներկայացուցիչ

Եղբ. Փէր Մանուկեան-Սկաուտական Խորհուրդի եւ բանակավայրի յանձնախումբերու ներկայացուցիչ

Եղբ. Վարդգէս Շիւրտումեան-Նաւասարդեան խաղերու եւ շէփորախումբի յանձնախումբերու ներկայացուցիչ

Եղբ. Իսաիկ Խալաթեան-Գոյքապահ եւ Նաւասարդեան խաղերու յանձնախումբի ներկայացուցիչ

Քոյր Անօ Սանտուրեան-Տնտեսական յանձնախումբերու ներկայացուցիչ

Եղբ. Բաֆֆի Խաչատուրեան-Data baseի, կայք էջի եւ դաստիարակչական յանձնախումբի օգնական



Սուրիոյ Ներկայացուցչական ժողովի մասնակիցներ

● Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ

Եղբ. Արմանտ Աբրամեան-Ատենապետ

Եղբ. Ալէք Խաչատրեան-Ատենադպիր

Քոյր Ռուբինա Ազիզեան-Գանձապահ

Եղբ. Ալէն Դաւթեան-Յաշուապահ

Քոյր Ալենոյշ Յովհաննիսեան-HYE յանձնախումբի կապ

● Հ.Մ.Ը.Մ. ՎԻԵՆՆԱ

Եղբ. Սարգիս Շատոյեան-Ատենապետ

Քոյր Ռիմա Պարոյեան-Փոխ ատենապետուհի

Քոյր Արսինէ Կարապետեան-Ատենադպրուհի

Եղբ. Միսաք Գասպարեան-Փոխ ատենադպիր

Եղբ. Սամուէլ Նահապետեան-Գանձապահ

● Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍ

Եղբ. Անդրանիկ Պահարեան-Ատենապետ

Եղբ. Լեւոն Պաղտասարեան-Փոխ ատենապետ

Քոյր Ռիթա Իսահակեան-Ատենադպիր

Եղբ. Յարութ Պազգալեան-Գանձապահ

Եղբ. Նազօ Նաճարեան-Յաշուապահ

Եղբայրներ Վարանդ Պաղտասարեան, Սորիս Տէմիրճեան, Յարմիկ Օհանեան, Արմէն Մնացականեան, Արամ Սիւեռեան եւ Անտրէ Մարգարեան-խորհրդականներ



ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՆ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعیه الهومنتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.Ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻՒ. ՏԱՐԻ, 2008, ԹԻ 12 (318)



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Պատգամ 3
- Ակնարկ 6
- Պատմություն 8
- Տեսակետ 10
- Մասնաձիղէ Մասնաձիղ 13
- Մեր Կորուստները 37



ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 12
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



ԽՄԲԱԳԻՐ
 ԿԻՉԷՆ ԱՆԱԳԵԱՆ
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՄ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան
 «ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աթո Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամձեան
 Տիրան Շահինեան
 Սալբի ճէճէեան
 Վահէ Թանաշեան
 ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Ժիրայր Սարգիսեան, Միհրան
 Շիմշիրեան, Ներսէս Արք.
 ԲախտիկեանԸ, Սամուէլ Սկրտիչեան,
 Գէորգ Թորոյեան, Արմէն Քէօշկերեան,
 Սալբի Լատոյեան եւ
 շրջաններու թղթակիցներ:
 Էջադրում - Զարեհ Զէօրեքձեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Seperation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՏՅԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.Ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՆԱԿԱՆ ԳՐԱՊՈՒԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱՐԵՐԱՐ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Նմանողութիւնը կեանքի գլխաւոր երեւոյթներէն մէկն է, որ մեծ դեր կը կատարէ անհատական թէ հաւաքական մեր կեանքի զարգացման մէջ:

Մարդիկ կը սիրեն իրարու հետեւիլ, նմանիլ, իրենց տեսած նորութիւնները իւրացնել եւ փոխադարձ ազդեցութիւններ կրել: Քաղաքակրթական հոսանքները եւս երկիրէ երկիր կ'անցնին նմանողութեան օրէնքով:

Կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ, ընկերութիւններ ի՞նչպէս կը զարգանան, դպրոցներ ի՞նչպէս կը կազմակերպուին, պետական կարգ ու սարքեր ի՞նչպէս կը հաստատուին, միութիւններ, կազմակերպութիւններ ի՞նչպէս կը գործեն. ազդուելո՞ւմ, ընդօրինակելով, նմանելով, իրարմէ փոխ առնելով եւ երբեմն ալ ամբողջութեամբ կիրարկելով այն ինչ որ յաջողած է այլոց մօտ:

Նմանողութիւնը ոչ միայն բնական երեւոյթ է, այլեւ՝ յառաջդիմութեան ազդակ է:

Ամէն դրութիւն սակայն ունի իր հակադրութիւնը: Ուժ մը կը հակազդուի այլ ուժով: Հոսանքները զիրար կը հակակշռեն եւ կը չափաւորեն: Այլապէս մարդիկ պիտի իյնային վտանգաւոր ծայրայեղութիւններու մէջ:

Եթէ կայ նմանողութեան փափաքը, կայ նաեւ ինքնատպութեան պահանջը: Կոյր յառաջդիմութիւնը, առանց պահպանողականութեան, պիտի վերածւէր խօշարշաւ վազքի, անկուծի առաջնորդելով հակակշիռէ զրկուած որեւէ ընկերութիւն:

Փաստ է, որ յաջողած են ամէնէն աւելի անոնք,- ընտանիքներ, միութիւններ, ազգեր,- որոնք ներքնապէս լաւ կազմակերպուած ըլլալով, հաւասար կարելորութիւն ընծայած են երկու թեւերուն ալ: Եղած են աւանդապահ, առանց սակայն զարգացման եւ յա-

ռաջդիմութեան առջեւ թումբեր կանգնեցնելու:

Այս ճշմարտութիւնները կը վերյիշեցնենք ազգային-միութենական մտահոգութիւններով:

Արդարեւ, Հ.Ս.Ը.Ս.ի աշխարհասփիւռ 100 մասնաճիւղերը այսօր իրենց անդամները դրած են բացառիկ կացութեան դիմաց: Տարբեր-տարբեր երկիրներու մէջ Հ.Ս.Ը.Ս.ականներ տեսական շփման մէջ են օտար բարքերու եւ սովորութիւններու հետ: Օրը նոր անոնց տեսածներն ու ապրածները նոր: Ամէնուրեք միութեան անդամներուն սրտին ու մտքին վրայ ջրհեղեղեան ներխուժում մը կը կատարուի ամէն տեսակ երեւոյթներու: Ուզեն թէ չուզեն պիտի ազդուին անոնք, պիտի նմանին, պիտի ընդօրինակեն:

Ասիկա եթէ առաւելութիւն մըն է մեզի համար, նաեւ թերութիւն մըն է, որ կրնայ լուրջ վտանգի վերածուիլ:

Առաւելութիւն, եթէ գիտնանք իմաստութեամբ եւ խոհեմութեամբ մօտենալ օտարին շլացուցիչ նորութիւններուն, եթէ կարենանք լաւը զատորոշել վատէն եւ ընտրովի՝ իւրացումներ կատարել: Թերութիւն եւ վտանգ, եթէ բերանաբաց հիացումի անձնատուր, հրաժարինք մեր ունեցած անգին գանձերէն, փոխարէնը հիւրընկալելու համար ուրիշներու կեղծ ոսկին:

Լաւագոյնը այս պարագային բարերար նմանողութիւնն է, զոր երբեք պէտք չէ շփոթել ախտագին կապկումին հետ: Բաներ կան, որոնք խորթ են հայու հոգիին, միութենական մարդու խառնուածքին եւ աւանդութիւններուն, պէտք է գիտնալ մերժել զանոնք, այլապէս անձնատուութիւնը, կոյր հետեւողութիւնը կը քայքայէ թէ՛ մեր անհատական նկարագիրը, թէ՛ մեր ընտանեկան յարկը եւ թէ մեր ազգային-միութենական արժէքներու բարոյական շէնքը:

Իսկ առանց այդ բոլորին, ի՞նչ կը մնայ մեզի, իբրեւ մարդ, միութիւն եւ ազգ:

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ

(ԵՂԲ. ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈԲԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ԵՒ ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ
50ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ՄՈՆԹՐԷԱԼԻ ՄԷՋ)

Այսօր իրապէս ուրախութեան օր է, երբ միասին խուռներամ կը տօնենք մեր մեծ միութեան արժանաւոր երկու տարեդարձները:

Բայց ի՞նչն է որ կը տօնենք այսօր, եթէ ոչ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ամեայ ծառայութիւնը ի սփիւռու աշխարհի:

Կը տօնենք նաեւ Մոնթրէալի մասնաճիւղին 50ամեայ ծառայութիւնը իր գաղութին:

Հիմնականօրէն, եւ առաջին հերթին, յարգանքի օր է այսօր: Յարգանք տարիներու ընդմէջէն, սկսելով միութեան հիմնադիրներէն, այն բոլոր նուիրաբերող, ծանօթ եւ անծանօթ, վաստակաւոր ու համեստ, Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերուն ծառայող վարիչներուն, մարզիչներուն, սկաուտ խմբապետ-խմբապետուհիներուն, որոնք սերունդներ հասցուցին, իրենց լաւագոյնը եւ առաւելագոյնը տուին, ոգի եւ շունչ դրին իրենց ծառայութեան մէջ եւ իմաստաւորեցին միութեան առաքելութիւնը:

Պահ մը պատկերացուցէք այն բազմահազար տղաքն ու աղջիկները, որոնք անցնող 90 տարիներուն անցան մեր միութեան շարքերէն:

Յարգանք յատկապէս Հ.Մ.Ը.Մ.Ի-ականներու այն փաղանգին, որ գաղթական հայ զանգուածներուն հետ դարձաւ Սփիւռք եւ դժուարին պայմաններու մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղեր հիմնեց Միջին Արեւելք, Եւրոպա եւ Ամերիկաներ:

Յարգանք անոնց անսակարկ վաստակին, անոնց հաւատարմութեան եւ յարատեւութեան: Յատուկ յարգանք անոնց յիշատակին:

Այսօր, երբ կը տօնենք Մոնթրէալի մասնաճիւղին հիմնադրութեան 50րդ տարեդարձը, ակնթարթով մը կ'անդրադառնամ, որ 1958ին ներկաներուն մեծամասնութիւնը այս քաղաքը չէր հաստատուած: 1958ին հաւանաբար ներկաներէն շատեր ծնած չէին: 1958ին, Մոնթրէալ նոր ժամանած խումբ մը երիտասարդներ -մեծամասնութեամբ Յունաստանէն- ամուրի, երբ շատ փոքր էր հայ գաղութը (հազիւ քանի մը հարիւր ընտանիք), երբ չկար կեդրոն, չկար եկեղեցի ու չկար դպրոց, համախմբուեցան Փութպոլի շուրջ եւ քանի մը հոգիին Հ.Մ.Ը.Մ.Ի-ական պատկանելիութիւնը մղիչ ուժը եղաւ «Արմենիա» Փութպոլի խումբի կազմութեան եւ մասնաճիւղի հիմնադրութեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի Մոնթրէալի մասնաճիւղի ֆութպոլի առաջին խումբը («Արմենիա»), 1958ին:
Չախէն աջ՝ Գրայր Արշակունի, Սյր Տիոմեան, Գեորգ Սեւակեան, Յակոբ Տիմիթեան, Արմեն Տիմիթեան, Ալպէր Մարտիրոսեան, Պետրոս Գարրիլեան, Սերգօ Եափուճեան, Վահագն Սաւուլեան, Գամբարձում Գաճեան եւ Սերգօ:

Այդ երիտասարդներէն քանի մը հոգին մեզի հետ են այսօր, քանի մը հոգին եկած են հեռաւոր Գալիֆորնիայէն:

Այսօր, մեզի համար դժուար է երեւակայել այդ տղոց այդ օրերու հոգեկան ապրումները, խումբին «Արմենիա» անունը, եռագոյն գոյներով համազգեստը, որոնք ազգային պատկանելիութեան արտայայտութիւններ էին:

Այդ օրերուն, զանազան օրաթերթերուն մարզական էջերով անդրադարձը՝ հիւրընկալ այս քաղաքին ծանօթացուց Հայաստանը եւ հայութիւնը:

Այսօր պատեհ առիթ է, յետադարձ ակնարկով մը ծանօթանալու մեր անցեալին, ճանչնալու ներկան, որպէսզի անցեալէն ներշնչուելով կարենանք ծրագրել ապագան:

Հ.Մ.Ը.Մ.Ի-ը իր հիմնադրութեան օրերէն, առաջնահերթ պարտականութեամբ, գաղթականութեան դժուար ու տագնապալի օրերուն, հայ պատանիին եւ երիտասարդին ջամբեց ազգային պատկանելիութեան զգացում, ազգին ծառայելու գիտակցութիւն, հայութեամբ հպարտանալու անհրաժեշտութիւն:

Սկաուտական շարքերը հայրենիքի ծառայութեան երդում տուին: Ուր եւ երբ հնարաւոր էր հայկական Եռագոյնը ծածանեցաւ մեր բանակումներուն կամ առաջնորդեց մեր տղանցքները, որովհետեւ հայրենիքէն հեռու 75 տարիներ հա-

ևատացինք ազատ ու անկախ հայրենիքի տեսլականին:

Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ»ը կարծեք Սփիւռքի մէջ դարձած էր ազգային քայլերդ:

Այս եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնական առաքելութիւնը, այս եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի մշտանորոգ գործը եւ կը շարունակուի:

Եկանք այս ամերը զանազան երկիրներէ, իւրաքանչիւրս իր հետ բերաւ շրջանի մը սովորութիւնները, բարբերն ու մտածելակերպը: Մէկը եկաւ Յունաստանէն կամ Եգիպտոսէն, միւսը եկաւ Հայկական կամ Պէրսիական: Բնական է ունեցանք անհասկացողութիւններ, եղան թերի կամ կարճատես որոշումներ, ապրեցանք սրտնեղութիւններ, սակայն կարողացանք միասին գործել, որովհետեւ վառ էր պատկանելիութեան գիտակցութիւնը:

Անպայման ներկաներէն ոմանք կը յիշեն «Արմենիա» Ֆուլթայոլի խումբին Քէպէք լիկի ախոյեանութեան մրցումը եւ բաժակը, որուն տիրացան 1962ին:

- Կը յիշեմ, երբ չկար Medicare, այդ օրերու վարչական օրակարգի նիւթ էր Ֆուլթայոլի խումբին բժշկական ապահովագրութիւնը:

- Կը յիշեմ, երբ Ֆուլթայոլի մրցումի աւարտին պատասխանատու եղբայրը կը հաւաքէր համագրեցածները ու շարկած՝ մաքրելու կը տանէր:

- Կը յիշեմ, ինչպէս տուն-տուն այցելելով, ծնողներ համոզելով, 1966ին կազմուեցաւ գայլիկներու առաջին վոհմակը:

- Կը յիշեմ, երբ չունէինք հաւաքավայր կամ գրասենեակ, մասնաճիւղի վարչական կամ Սկաուտ. Խորհուրդի ժողովները անհատ միութենականներու տուններուն մէջ կը գումարէինք:

- Կը յիշեմ, երբ չունէինք մարզադաշտ -պասքեթբոլի փորձերուն համար- քաղաքին մէջ ցիր ու ցան, միաժամանակ մինչեւ 5 մարզասրահներ կը վարձէինք:

- Կը յիշեմ, երբ ցուրտ-ձմեռ, այդ վարձու դաշտերուն հսկիչը դուռը չէր բանար մինչեւ համաձայնուած ժամը, պատանիները համբերութեամբ կը սպասէին:

- Կը յիշեմ, քանինք՝ համբերութեամբ դաշտի նստարանին վրայ սպասած են կարգի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը փորձի բաւարար գնդակներ չունէր:

- Կը յիշեմ, 1973ին, Հայ Կեդրոնի իրականացումով, երբ մասնաճիւղը օժտուեցաւ գրասենեակով, ինայասիրութեան համար քանի մը Հ.Մ.Ը.Մ-ականներ ժողովի սեղան շինեցին: Սեղանը մինչեւ օրս կը գործածուի:

- Կը յիշեմ, հին գործածուած թմբուկներ նորոգելով է որ կազմուեցաւ մասնաճիւղին թմբակահարներու խումբը:

- Կը յիշեմ, մարզիչներու գոհունակութիւնը, երբ մեր աթլէթները կ'արձանագրէին Հ.Մ.Ը.Մ-ական մրցանիշներ:

- Կը յիշեմ, որքան մեծ էր Հ.Մ.Ը.Մ-ականներու ուրախութիւնը, երբ 1979ին այս մարզասրահին բացումով իրականացաւ երկար տարիներու երազը: Այն օրերուն մասնաճիւղը այս նպատակին ինայած 50 հազար տողարով մասնակցեցաւ շինութեան:

Կարելի է շարունակել, վստահ եմ, ձեզմէ իւրաքանչիւրը այսօր յուշերով կը վերանորոգուի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը մեզի տուած է յիշատակելի տաքուկ ապրումներ:



Այսօր մեզի հետ են մասնաճիւղի առաջին վարչականներէն անդամներ:

Մեզի հետ է առաջին սկաուտ խմբապետը:

Մեզի հետ է պասքեթբոլի անդրանիկ խումբին մարզիկը:

Այսօր, բացառաբար, մէկ կողմ կը դնեմ համեստութիւնը եւ հպարտութեամբ կը հաստատեմ, որ անցնող 50 տարիներուն Մոնթրէլի մասնաճիւղը պատուաբեր ներկայութիւն եղած է Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային կեանքին մէջ:

Արդարեւ, հիմնադրութեան օրերուն, 1958ին, առաջին եւ միակ գործօն մասնաճիւղը եղաւ հիւսիսային Ամերիկայի տարածքին:

Երբեմն եղաւ բարի օրինակ, երբեմն եղաւ մղիչ ուժ Գանատայի եւ Միացեալ Նահանգներու նորակազմ մասնաճիւղերուն համար:

Այս մասնաճիւղն է, որ 1971ին, Մերձաւոր Արեւելքի Պատգամաւորական Ժողովին մասնակցելով ներկայացուց յանդուգն առաջարկ մը՝ Հ.Մ.Ը.Մ-ը օժտելու համագաղութային կառոյցով եւ Կեդրոնական Վարչութեամբ: Այդ կառոյցը անցնող 34 տարիներուն կամրջեց Հ.Մ.Ը.Մ-ական աշխարհացրիւ շրջանները:

- Այս մասնաճիւղը եղաւ առաջինը, որ հեռաւոր այս ամերէնէն, 1972ին, մարզական խումբով մասնակցեցաւ Պէրսիական միջ-մասնաճիւղային խաղերուն:

- 1981ին, Հ.Մ.Ը.Մ-ի առաջին համագաղութային մարզական խաղերուն կազմակերպութիւնը քաջաբար ստանձնեց Մոնթրէլէն, Թորոնթոյի հետ: Կրկնեց 1993ին, Ֆուլթայոլի համագաղութային մրցաշարով: Այս մեծածախս ձեռնարկները պատուաբեր եւ պատմական յաջողութիւններով իրականացան, հաւատաւոր միութենականներու կազմակերպ ճիգերով:

Իմ կարծիքով, այս քանի մը յուշերով անցեալի ծանօթացումը անհրաժեշտ էր: Գործ դրուած յարատեւ ճիգերով իրա-



կանացած մեր այսօրը գնահատելու եւ արդարօրէն մեր ներկան ճանչնալու համար:

Պարագան նոյնն է Հ.Մ.Լ.Մ.ի 90ամեայ երկար ու հեւքոտ կեանքին: Սկզբնական համեստ ժամանակները, այդ օրերու հաւատաւորներու նուիրումով ու զոհողութիւններով, Հ.Մ.Լ.Մ.ը եւ մեզ հասցուցին աւելի կազմակերպ, աշխարհացրիւ մասնաճիւղերով օղակուած այսօրուան 25 հազար անդամներուն:

Միջ-մասնաճիւղային խաղերը խանդավառեցին գաղութները, Հ.Մ.Լ.Մ.ը ամէնուրեք եղաւ ժողովուրդին հպարտանքը:

Անցնող տասնամեակներուն, Հ.Մ.Լ.Մ.ը ունեցաւ մարզական խումբեր, որոնք հասան տեղական խոյրեանութեան, երբեմն նոյնիսկ մարզական ազգային խումբերուն տուին արժանաւոր մարզիկներ:

Տակաւին երեք ամիսներ առաջ, հեռաւոր Մոսկուայի մէջ հիմնուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի 100րդ մասնաճիւղը, առաւելաբար Միջին Արեւելքէն Մոսկուա հաստատուած՝ պատկանելիութեան գիտակից Հ.Մ.Լ.Մ.ականներու կողմէ, համախմբուելու կարիք մը բաւարարելու համար:

Ձեզի տրամադրուած յուշամատենի էջերէն անպայման կ'անդրադառնաք, թէ Հ.Մ.Լ.Մ.ը համազգային տարողութեամբ ինչքան ճիւղաւորուած է եւ արդար հպարտութեամբ կրնաք հաստատել, որ Հ.Մ.Լ.Մ.ը առանց պետական ներդրումի, առանց օժանդակութեան, այսօր հայ կեանքի ամէնէն բազմանդամ երիտասարդական կազմակերպութիւնն է:

Պատիւ մեր համակիր ազգայիններուն, որոնք 90 տարիներ զօրավիգ եղան, բարոյապէս եւ նիւթապէս, որովհետեւ հաւատացին Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան:

Վերջերս, մտերիմ գրոյցի մը ընթացքին, սրտցաւ Հ.Մ.Լ.Մ.ական մը հարց կու տար, թէ ի՞նչպէս կարելի է պատկերացնել Հ.Մ.Լ.Մ.ը իր 100ամեակին:

Հեռու է 2018ը: Սակայն եթէ կ'ուզենք նոյնքան աշխոյժ, նոյնքան կազմակերպ դիմագրաւել հարիւրամեակը, անհրաժեշտ է վաղուընէ գործի անցնիլ:

Երբ անկեղծ հայեացքով կը նայինք մեր միութեան ներկային, անպայման կ'անդրադառնանք, որ Հ.Մ.Լ.Մ.ը կը դիմագրաւէ քանի մը մարտահրաւէրներ:

Մեր շրջապատը, աշխարհը ամբողջ արագընթաց կը փոխւի:

Անցնող տասնամեակներու միութենական կեանքին ծանօթ ըլլալով, կրնամ հաստատել, որ տարբեր երկիրներու տակ, տարբեր տարողութիւններով, մենք եւս իբրեւ անհատ եւ հաւաքականութիւն կ'ազդուինք, ազդուած ենք արդէն շրջապատէն:

Կարգ մը շրջաններու մէջ՝ աւելի քան ուրիշներ, բարոյական հասկացողութիւնները, անձնակերտն բարքերը, նորօրեայ կենցաղները ժխտական անդրադարձ կ'ունենան ծառայասիրութեան եւ նուիրաբերումի արժէքներուն վրայ:

Մեր յաջողութիւններուն գաղտնիքը կամաւորներու իրերայաջորդ փաղանգները եղան: Հ.Մ.Լ.Մ.ը հզօր է իր յանձնառու կամաւորներով, եւ մեր կարեւորագոյն մարտահրաւէրը նոր կամաւորներ պատրաստել եւ գործի հրաւիրելն է:

Կարելի չէ բաւարարուիլ մեր ունեցածով, մեր ներկայով: Պարտականութիւնը ունինք անյետաձգելի կարեւորութեամբ վերանորոգուելու, վերանայելու մեր գործունէութեան յայտագիրները, պատշաճեցնելու մեր ժողովական կեանքը: Օրուան նորաստեղծ պայմաններուն համաձայն ճկուն աշխատեալաձեւեր փնտռելու:

20րդ դարու մտայնութիւններէն անցնելու Չլրդ դարու մարտահրաւէրներուն:

Մենք՝ իմ սերունդս պարտականութիւնը ունի լսելու եւ հասկնալու երիտասարդները, փոխադարձաբար մեր երիտասարդները պարտականութիւնը ունին պատրաստակամ ըլլալու, ծանօթանալու միութեան ժառանգութեան եւ պարտականութիւններ ստանձնելու:

Միասին, փոխադարձ յարգանքով կրնանք նախանձելի ծրագիրներ իրականացնել ի սպաս հայ պատանիին, ուշադիր ըլլալով որ մարմնակիրժական մեր միութիւնը օրին մէկը չհառնայ սոսկ մարզական ակումբ, տեղական հասկացողութեամբ քլապ:

Միութեան ներքին կեանքի վերանորոգման քանի մը կարիքներ չեշտեցի: 90ամեակի առիթով տարբեր մարտահրաւէրի մը մասին կը փափաքիմ խօսիլ՝ ուղղուած հայ հաւաքականութեան. երիտասարդ-երիտասարդուհիներուն, չափահաս ամէն հայու, կին թէ այր մարդ, նոյնիսկ երէց սերունդին հարց տալով, թէ Ֆիզիքապէս՝ մարմնով որքա՞ն լաւ ենք ու աւուղջ:

Շաբաթական քանի՞ վայրկեան կը տրամադրենք մարզանքի կամ քանի՞ քրիտմեթր կը քալենք նստակեաց մեր աւօրեայէն դուրս գալու համար:

Չլրդ դարու մարտահրաւէր է այս Հ.Մ.Լ.Մ.ին, համասփիւռքեան տարողութեամբ յանձնառու ըլլալու, խօսելու, պատեհ առիթներով յիշեցնելու, գրելու, գիրար քաջալերելու, որ առաւելագոյն թիւով հայորդիներ, մեծ ու երիտասարդ, ժամանակ տրամադրեն մարզանքի:

Կը վերջացնեմ:

Մարդկային իրաւունքներու ջատագով, միջազգային դէմք, հարաւային ափրիկեցի Նելսոն Մանտելայի մէկ խօսքով, որ իր 90րդ տարեդարձին ըսած է. «It is time for new hands to lift the burdens» («Ժամանակն է որ նոր ձեռքեր վերցնեն բեռը»):

Հ.Մ.Լ.Մ.ի 90ամեակին այս խօսքը կը պատշաճի նաեւ մեզի:

Այս հանդիսաւոր պահուն, համոզուած եմ որ մենք ունինք նախանձախնդիր տղաք, պիտի ունենանք տեսիլք ունեցող երիտասարդներ, պիտի ունենանք յանդուգն միութենականներ, որոնք պիտի ձգտին լաւագոյնին:

Համոզուած եմ վերջապէս, որ մենք կարող ենք Մ. Նահանգներու նորընտիր նախագահին խօսքերով. «Yes we can»: Միասին ծառայութեան ճամբով, մենք կրնանք նորանոր բարձունքներու հասցնել Հ.Մ.Լ.Մ.ը իր 100ամեակին:

Շնորհաւոր ըլլայ մեր 90ամեակը եւ մասնաճիւղին 50ամեակը:

Մի՛ մոռնաք. «Yes we can»: «Այո՛, մենք կրնանք»:

ՄԵԾ ՄՕՐ ՄԱՐԶԱԿԱՆ ՇԱՊԻԿԸ

**Ժիրայր
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԹՕ**

ՀՄԼՄ-ի Նա-
ւասարդեան
մարզախաղե-
րու հրապոյ-
րով զգալիօրէն տարուած
է ութ տարեկան մեր թու-
նիկը՝ Դալարը: Ան մաս
կը կազմէ ՀՄԼՄ-ի Սան
Ֆրանսիսթոյի մասնաճիւ-
ղի սկսողութեան եւ
փոքրերու պասքեթպոլի
խումբին:

Ինք լսած ու կրկնակի
հարցումներով պարբերա-
բար հետաքրքրուած է իր
մեծ մօր՝ Սրբուկին մար-
զական անցեալով, որուն
վկայութիւնը եղող բազ-
մաթիւ իրեր եւ օտարալե-
զու գունատ հրատարա-
կութիւններ, անհատական եւ խմբային լուսանկարներով, տեսած ու շօշա-
փած է իր մեծ հօրը տան մէջ, անդրադառնալով որ մարզական եզակի արժա-
նիքներով օժտուած մարզիկուհի մը ըլլալով, ան տարիներ շարունակ խմբա-
կիցներուն հետ տիրապետած է պասքեթպոլի դաշտերուն եւ յաղթանակնե-
րով պանծացուցած է ՀՄԼՄ-ի անունը Լիբանանէն ներս թէ դուրս:

Ան իր մանկական երեւակայութեան մէջ մեծ մայրը դասած է իր ամենա-
կարող հերոսուհին եւ սակայն զարմացած է, թէ որքան փոքրացած է անոր
մարզական շապիկը, որուն միակ նմանութիւնը իր տարագին հետ, վրայի
չորս տառերն են՝ ՀՄԼՄ:

Կը մօտենայ Նաւասարդեան մարզախաղերու ճամբորդութիւնը. կրկնա-
պատկուած են նաեւ մարզական փորձերը: Լսելով մօրը ուրախ յայտարա-
րութիւնը, թէ Դալարը այս տարի լրջօրէն կը պատրաստուի մրցումներուն,
կ'առաջարկեմ մեծ մօրը շապիկովը մասնակցի խաղերուն:

Դալարը հետաքրքրութիւնը սրած երբ մտիկ կ'ընէ՝ կ'ըսեմ. ճանիկ միայն
դո՛ւն կրելու հաճոյքը ունիս այդ շապիկը, որուն մէջէն հազարաւոր ծափեր
եւ ուրախ կանչեր կը լսուին, մօտեցո՛ւր ականջիդ եւ լսէ...

Դալարը թերահաւատ ժպիտով մը կը համաձայնի, շապիկը կը հագուի եւ
պահ մը հարցական հայեացքով շուրջը դիտելէ ետք՝ «Ես նոր Սրբուկին եմ»
ըսելով, գնդակը փոխելուն մէջ առած, աշխոյժ շարժումով մը կ'երթայ փոր-
ձին...:



Միհրան Շիմշիրեան ՊԵՅՐՈՒԹ

Վարագոյրը իջաւ ՀՄ-
ԼՄ-ի 90ամեակի սօ-
նակատարութիւննե-
րուն վրայ: Միութեան
աշխարհատարած մաս-
նաճիւղերը արժանաւոր ձեւով տօնեցին
90ամեայ յոբելեանը եւ լուսարձակի
տակ առին ՀՄԼՄ-ի դերակատարու-
թիւնը մեր կեանքին մէջ, իրեւ մարզա-
կերտման եւ հայակերտման դարբնոց:
Բանախօսներ եւ յօդուածագիրներ այս
առիթով ընդգծեցին միութեան մեծ
աւանդը՝ մատղաշ սերունդներու
առողջ դաստիարակութեան մէջ: Բոլոր-
ը, գրեթէ անխտիր, միութեան պատ-
մութեան էջերուն մէջ գտան ազգայնա-
շունչ դրուագներ, հայ ժողովուրդի պա-
հանջատիրութիւնը շեշտող արարքներ
եւ հայ մարդու հոգիի ազնուութեան
կապուած մարդկային արժանիքներ:

Այսպէս, ՀՄԼՄ- իր ժողովուրդին
ներկայացաւ իր կոչումին վայել հա-
րուստ վաստակով:

Այսօր, 90ամեայ այս միութիւնը
կը մնայ հայապահպանման ապահով
կռուան մը սփիւռքահայ ներկայ եւ գա-
լիք սերունդներուն: Հայաստանի մէջ,
ան պատենչի վրայ է. կը պատրաստէ
հայ տիպար քաղաքացին, ազնուացնե-
լով անոր միտքն ու հոգին:

ՀՄԼՄ- իր 100 մասնաճիւղերով,
2009ին կը թեւակոխէ 100ամեակի վերջին
տասնամեակի առաջին տարին, իր դի-
մաց ունենալով մեծ մարտահրաւէրներ:

Այսօր, ՀՄԼՄ-ի կազմերուն մէջ
չկան Եղեռնէն ազատած պատանիներ:
Զկան անուս մարդիկ: Բայց կան օր-
ւան գիտութիւններուն ծանօթ մարդիկ,
ոմանք քաջածանօթ, ուրիշներ բաւա-
կան գաղափար ունեցող: Բոլորն ալ սա-
կայն այդ գիտութիւններուն բարիք-
ներն ու շարիքները վայելող:

Այս երեւոյթը ՀՄԼՄ-ին յատուկ չէ
միայն: Երեւոյթը ընդհանրական է եւ
մեզմէ իւրաքանչիւրին մտահոգու-
թիւնն է:

Այսօր, որբեր դաստիարակելու տեղ

ԿԸ ՊԱԿՄԻ ՈԳԻՆ

(ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՏՔ)

հարկ է համակարգիչներու ղրմաց գամ-
լած պատանիներուն բացատրել, ուղ-
ղել, որպէսզի գերին չզառնան մեքենա-
յին եւ զոհը չըլլան յաճախ անօդուտ եւ
վնասակար համակարգչային ծրագիր-
ներու: Անուս մարդոց տեղ այսօր կան
համալսարանականներ, որոնց հետ յա-
րաբերելու եղանակները անհամեմատօ-
րէն կը տարբերին անցեալի անդամնե-
րու հետ վերաբերումի մեր եղանակէն:

Այս բոլորը, հաւանաբար, կրնան ու-
նենալ իրենց լուծումները: Հարցը այլ
տեղ է: Հարցը ոգին է, որ օրէ օր
կը պակսի նորերուն մօտ, բոլորին մօտ
ընդհանրապէս: Այս պակասը կու գայ

ազգային աւանդներու հանդէպ մեր ու-
նեցած անտարբերութենէն, անհոգու-
թենէն, թափթփածութենէն եւ օրուան
պայմանները պատրուակելու մեր մօ-
տեցումէն:

Ոգին միակ ուժն է, որ մեր ժողո-
վուրդը հեռու կը պահէ ճուլումէն, այ-
լասերումէն: Ոգիով կը կապուինք մեր
արմատներուն, պատմութեան, պահան-
ջատիրութեան եւ անկատար տենչե-
րուն: Առանց այդ ոգին պիտի չկարե-
նայինք 90ամեակ հասնիլ, ու առանց
անոր, վաղը պիտի չկարենանք կերտել
նոր ամեակներ:



ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann Arthus-Bertand / Agf / Terre we du Ciel / Licence 075960031 - Studio / KODI 2005 / AOS

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select
your Journey
- Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

17 Մայիս 1949.
Հ.Ս.Ը.Մ.Ի Այնճարի
մասնաճիւղի
գայլիկներն ու
սկաուտները
Պաալպէքի մէջ:



րան Աղճալեան եւ Լուտեր Մասպանաճեան,- որ նիւթական եւ բարոյական աջակցութեամբ Ձեր պարտականութիւնը կատարած պիտի ըլլաք հանդէպ Համազասպ ակումբին եւ նորակազմ վարչութեան, որ պիտի աշխատի միութիւնը ալ աւելի կազմակերպել տուեալներուն վստահելով»:

Լայն ծիրով մարմնակրթանք յառաջացնելու միակ միջոցը պիտի ըլլար նիւթականը, որ անկասկած պիտի գար կազմակերպութեան անդամներուն զոհաբերութեան ոգիին: Վստահօրէն Հ.Ե. Համազասպ Մարմնամարզական Ակումբի վարչութեան կոչ-չրջաբերականի ոգին անարձագանգ պիտի չմնար եւ վարչութիւնը քաջալերուած՝ խիզախութիւնը պիտի ունենար բանալու դուռը ողիմպիական խաղերու, Նաւասարդեան վերածնունդ շունչով:

Այս դաշտահանդէսին նիւթական ապահովութեան մտահոգութենէն մղուած, վարչութիւնը ազգայիններու կը դրկէ 21 Սեպտ. 1924 թուակիր հետեւեալ նամակը.-

«Յարգելի Տեար,

«Մարզանքի խանդավառութիւնը ժողովրդականացնելու եւ առողջ ու ուժեղ ըլլալու պէտքը երիտասարդներու մէջ անհրաժեշտ պահանջ մը դարձնելու նպատակաւ, Ակումբս իր անդամներուն մարզանքի մէջ կատարած երկար ու յարատեւ աշխատանքը կ'ուզէ ցուցադրել ժողովուրդին: Ասոր համար կազմակերպած է դաշտահանդէս մը - Աքապէյի Մարզարանին մէջ- որուն տոմսերէն մէկը կը գտնէք ներկայ:

«Յուսալով որ ի քաջալերութիւն մեր ջանքերուն ձեր ներկայութեամբ պիտի պատուէք այս մարմնամարզական Ա. դաշտահանդէսը:

Մնանք յարգանքօք՝

Ի դիմաց Հ.Ե. Համազասպ Մարմ.
Ակումբի

Ա.դպիր Ա.պետ
Տիգ. Աղճալեան Լ.Մասպանաճեան»

Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Է. ՄԱՍ

Հայ Երիտասարդաց Համազասպ Մարմնագական ակումբը, կանգնած առողջ եւ ազգային գեանի վրայ, օրերու հետ կը դառնայ մարմնակրթանքի կեդրոնական մագնիսը: Իր 1924 Յունիս 12 թուակիր շրջաբերականով, պարզելէ ետք միութեան «նիւթական նեղ կացութիւնը», հարկ կը տեսնէ բոլոր անդամներուն ղրկելու խմորատիպ շրջաբերական-նամակ՝ «անդամներուն լուրջ խորհրդակցական նիւթ ընելու մի քանի էական խնդիրներ», այսինքն՝ «օգնեն իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնով միութեան յառաջացման եւ կազմակերպման»:

«Լիայոյս ենք,- կը գրեն շրջաբերականը ստորագրող Տիգ-

Սուրբոյ եւ Լիբանանի ընդարձակ սահմաններէն ներս, դիտողին աչքին հայկական հսկայ գաղթաշխարհ մը կը պարզուէր: Հարիւր հազարներու հասնող այս հայորդիներուն համար, որոնց թիւը հետզհետէ կը բազմանար որբանոցներէն արձակուած որբ ու որբուհիներով, պէտք էին կազմակերպութիւններ, հաւաքատեղիներ, հսկող աչքեր ու խնամող ձեռքեր, մանաւանդ որ այս ամիսներուն վրայ արդէն իսկ հասակ նետել սկսեց իր տարագրութեան մէջ ծնունդ առած սերունդ մը:

Այս ընդհանուր երեւոյթին մէջ, Պոլսոյ մէջ ծնունդ առած եւ լայն ընդունելութիւն գտած ու տարած-լած Հայ Մարմ-

նակրթական Ընդհանուր Միութեան կազմութիւնը այս հիւրընկալ փերուսն վրայ նախախնամական պիտի ըլլար:

1923ի վերջերը, Պէյրուսի քարափը ոտք կը դնէ երիտասարդական տարիքը հազիւ թեւակոխած, իր պատանեկութիւնը Պոլիս անցուցած, Քրիսեաններու շրջանը ապրած ու տեսած, ապա Գրիգոր Յակոբեաններու օրերուն հասակ նետած, անոնցմէ առած այնքան որքան մարդ կարող է ուսանիլ, կառուցուիլ, լեցուիլ եւ ահա, գօտեպնդուած այդ բոլորով, Ալպէր Յակոբեան: Հազիւ ինքզինք գտած Պէյրուսի մէջ, 1924ի սկիզբները, գեղեցիկ ներշնչմով մը Քրիսեաններու անմահ ոգիէն, ան կը մտածէ Հ.Մ.Լ.Մ-ի գրօշրբարձրացընել Լիբանանի գեղածիծաղ փերուսն վրայ, անոր ծալքերուն ներքեւ մէկտեղելու տարագիր հայկ ու հայկուհիներու հետգհետէ հասակ նետող բանակը:

Այդ օրերուն, հին Մասրատի մէկ անկիւնը, տախտակէ պատով ու թիթեղէ տանիքով հայկական փոքր ճաշարան մը կար: Հոն կը յաճախէին ամուրի, ընտանիքէ ներս գուրգուրոտ ձեռքի պակաս ունեցող տարագիր երիտասարդներ: Անոնց կարգին նաեւ՝ Ալպէր Յակոբեան: Օր մը, օրերուն ամէնէն գեղեցիկը անկասկած, Ալպէր Յակոբեան, իր սրտէն ու մտքէն անցնող փոթորիկին գոհացում տալու մտօք, վերջապէս կ'առաջարկէ իրեն ճաշակից Հ.Մ.Լ.Մ-ական Յարութիւն Պէյրուսեանին, Պէյրուսի մէջ ստեղծելու Հ.Մ.Լ.Մ-ի շարժումը: Հոն ներկայ կ'ըլլան նաեւ Ժիրայր Զիէրճեան, Սանթիկ Փոլուեան եւ համակիր տղաք: Նետը աղեղէն նետուած էր: Նետուած սերմերը արմատ կը նետեն մտքերու մէջ ու խօսքէն գործի անցնելով կը ժամադրուին աւելի հանգամանօրէն խօսելու առաջադրանքին շուրջ, Սուք Պէյրիկէն Հայկ Պուտագեանի շապկագործի փոքր խանութը, ուր կ'աշխատէր Ալպէր Յակոբեան: Այս խորհրդակցական հաւաքոյթին իրենց



1928 Յ.Մ.Լ.Մ-ի Հալէպի եւ Պէյրուսի ֆութպոլի խումբեր Պէյրուսի մէջ:

կը միանան նաեւ Հայկ Պուտագեան, հին ֆութպոլիստ մը, Ստեփան Գափարաճեան եւ ուրիշներ:

Վճռապէս կ'որոշուի կեանք տալ Հ.Մ.Լ.Մ-ին: Տեղուցն վրայ կող մը կը խմբագրուի ու կը դրկուի «Փիւնիկ»ին: Այս կոչով ժողովի կը հրաւիրուին անդամագրուիլ փափաքողներ, մարզանքի համակիրներ, հայ երիտասարդներ եւ համակիրներ: Ծրագրուած ժողովը տեղի կ'ունենայ Ագգային Ս. Նշան վարժարանի դասարաններէն մէկուն մէջ:

Կոչին պատասխանելով, հոն եկեր էին Ամերիկեան Համալրասարանի հայ ուսանողներ, ինչպէս Ժիրայր Պալեան՝ Պոլսոյն Ռոպէրթ Գոլճճի մարզիկներէն եւ Ժիպէյլի որբանոցի երէց սաները, ինչպէս Յովհաննէս Շահինեան եւ ուրիշներ: Այս ժողովին իր մասնակցութիւնը կը բերէր նաեւ Պէյրուսի Ժողովրդային Տան Պատանեկան Միութիւնը իր ֆութպոլի խումբով, ղեկավարութեամբ Կարօ Պետիկեանի:

Պարզուած ծրագիրներէն եւ արտայայտուած գաղափարներէն վերջ, կ'ընտրուի Հ.Մ.Լ.Մ-ի առաջին վարչութիւնը, որուն մաս կը կազմեն Ալպէր Յակոբեան, Ժիրայր Պալեան, Յովհաննէս Շահինեան, Յարութիւն Պէյրուսեան եւ Կարօ Պետիկեան:

Նորակազմ միութիւնը, իր նորակազմ վարչութեամբ, սեփական հաւաքավայր չունէր: Վարչութիւնը իր հերթական ժողովները կը գումարէր Պասթա թաղամասը, Կարօ Պետիկեանի բնակարանին մէջ: Միութիւնը չունէր նաեւ խաղավայր՝ գոհացում տալու համար ֆութպոլի իր խումբերուն: Փորձերը տեղի կ'ունենային տարբեր վայրերու մէջ. Ֆրըն Շրպպէք՝ հայ կաթողիկէներու որբանոցին բակը, Տորայի շրջանը՝ լքուած գետիններու վրայ, Քարանթինայի առջեւի դաշտը՝ հոն կուտակուած քարերը մաքրելէ ետք:

(Շար. 7)



Հ.Մ.Լ.Մ-ի Պէյրուսի եւ Հալէպի պասթեպոլի աղջկանց խումբեր:

ԶԳՈ՛ՅՇ ԴԱՐՐ ԳԷՇ Է

Սամուել Սկրտիչեան ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Դարը գէշ է:

Ժողովուրդները իրենց ազգային դիմագիծէն՝ մշակոյթէն գրկելու, ստրկացնելու միտումը, մարդուն հոգեկան ժառանգը՝ բարքերն ու սովորութիւնները աղճատելու, խաթարելու նպատակը շատ զօրաւոր են: Այսօր աշխարհի վրայ, ամէն կողմ, հոգեկան թէ ֆիզիքական կռիւ կայ: Ամէն կողմ մարդկային արիւն կը թափի պարզապէս՝ ներգրաւելու, տիրելու մարմաջէն թելադրուած:

Դարը գէշ է:

Աշխարհը տակաւ կը պզտիկնայ մարդկութեան համար:

Այլազան եւ այլազոյն ժողովուրդները տակաւ կը խառնուին իրարու: Մարդկային ձուլարաններ տակաւ կը զարգանան ու զօրաւորը կ'իւրացնէ տկարը:

Կեանքի այս չար գուպարին մէջ ի՞նչ կ'ընենք մենք՝ հայ ժողովուրդի թափառական գաւակները: Նաեւ մենք, որ հայրենիքէն քշուած, թալանուած, ջարդուած հայ ժողովուրդի մնացորդին ժառանգորդներն ենք: Մենք կամայ թէ ակամայ հայրենիքը լքած ու ինկած ենք օտար ճամբաներու վրայ:

Այսու, գուցէ ծանր թուի եթէ ըսենք, թէ մենք դարձած ենք աշխարհով մէկ ցիրուցան, անտուն, անդեկ, «փերիշան» (թշուառ): Հաճեցէք թոյլ տալ այս օտար բառը: Այո՛ մենք դարձած ենք «փերիշան» թէ՛ հոգեպէս, թէ՛ մտայնօրէն եւ թէ՛ ազգովին:

Դժբախտաբար, Ռուբինեան Տան անկումէն՝ 1375 թուականէն ասդին, մենք՝ հայ ժողովուրդը, կորսնցուցած ենք հայրենիք բառին խորհուրդը, նշանակութիւնը մեծ եւ սքանչելի: Մենք մոռցած ենք հայրենիք բառին նիւթահոգեկան արժանիքը, դերը, փառքն ու պատիւը անգնահատելի: Մենք՝ ժողովուրդին թափառական գաւակները, հայրենիք բառը շարկած՝ հայրենիք կը փնտռենք: Բայց հայրենիքը չենք գտներ: Քանի հայրենիք բառը մեզի համար դարձած է լոկ խօսակցութեան նիւթ, լոկ՝ զրոյցի պաշար, առանց հոգիի, առանց շունչի: Թէեւ, պէտք է շեշտել, որ հայրենիքը մեզ փնտռելու, մեզի տէր ըլլալու, մեզ հայրենիքով խանդավառելու, հետաքրքրելու տրամադրութիւնը ցոյց չի տար:

Մինչ այսօր, աշխարհի ո՛ր անկիւնը որ ուզէք, մենք կանք, բայց ցաւալին այն է, որ տակաւ կը հմայուինք օտար բարքերով, օտար խաղերով, օտար արժէքներով ու կը մոռնանք մեր ազգային պարտականութիւնը, մեր հողն ու հայրենիքը, մեր նահատակ պապերուն արեան հատուցումը:

Մենք օտար ճամբաներու վրայ Եռագոյն դրօշ կը պար-



զենք, պալատներ կը կանգնենք, երկիրներ կը շէնցնենք, կը զարգացնենք, բայց տակաւ կը ձուլուինք: Բայց, տակաւ կը մոռնանք հայրենիք ու հայութիւն...:

Բայց Աստուծոյ սիրոյն, ալ պէ՛տք է զգացուինք, ալ պէ՛տք է հոգեպէս ցնցուինք ու անդրադառնանք մենք մեր իսկութեան:

Իսկ եթէ այսօր, այս օտար ափերուն վրայ, հայ մնալու միջոցները չենք գիտեր, թող որ հարցնենք գիտցողներուն...

Բայց, ալ հարկ է, որ գիտակցինք, որ Աստուած եղեմը դրաւ հայ հողին վրայ եւ առաջին մարդը ստեղծագործեց Հայաստանի հողին վրայ: Իսկ Նոյ նահապետին տապանը կայք դրաւ Մասիսի գագաթին: Իսկ Նոյին աղաւնին խաղաղութեան աստուածային աւետիսը Հայաստանի՛ հողէն առաւ:

Կարծեմ աստուածային այսքան փառք, այսքան շնորհ մեծ նշանակութիւն ունին, մեծ պատգամ են ուղղուած ե՛ւ Հայաստանի հողին եւ մեզի՛ հայութեան:

Բայց ո՞ւր են մեր պատմաբանները, մեր գիտունները՝ աստուածային այսքան բարեհաճութիւն, այսքան պարգև հաղորդելու, պատգամելու հայ ժողովուրդին:

Ո՞ւր են մեր պատմաբանները, երբ այսօր օտար ափերու վրայ հարկ է հայ սերունդներու հոգիէն ներս ազգային կրակ վառել, ազգային հպարտանքի նոր Աւետարան տալ հայ տղուն ձեռքը:

Բարեկամ, այսու ես կը զգուշանամ հարց տալ, թէ ո՞ւր են մեր ազգին պատասխանատուները եւ ի՞նչ կը մտածեն, երբ այսօր, այս ափերուն վրայ, թափառական այս ժողովուրդին գաւակները արդէն սկսած են ընդգրկել օտար բարքեր, օտար սովորութիւններ եւ օտար խօսք:

Ո՞ւր են մեր մեծերը, երբ մեր ազգային յոյսերն ու լոյսերը տակաւ կը խամրին, մեր մշակոյթը տակաւ կը նահանջէ ու

մեր հոգին տակաւ կը պարպուի հայ երգէն ու բերքէն, հայ միտքէն ու իմաստէն:

Ո՞ւր են հայ կեանքի հոգեւոր թէ աշխարհական մեծերը եւ ի՞նչ կը խոսկան, երբ հայ մարդուն ազգային զգացումները տակաւ կ'օտարանան իրենք իրենց իսկութեան հետ ու հայութիւնը տակաւ կը հեռանայ հայ սիրտերէն: Օրինակներ տալու պէտք չեմ տեսներ: Բայց կը վախնամ, որ հայ կեանքին այս ընթացքով, 30, 40 տարի ետք իմ այլ ծոռերս գան շիրիմիս ու գոռան:

- «Մայ կրան բա ուազ արմինիդ»:

Ո՞ւր են մեր ազգային կեանքին բոլոր ասպարէզները՝ պատմական, գիտական կրօնական, ազգագրական, գրական, մարզական, կուսակցական եւ այլնի պատասխանատուները, երբ այսօր, աւելի քան երբեք, հարկ է որ մտածենք վաղուան սերունդները հայ պահելու, վաղուան սերունդներու հոգիէն ներս ազգային զգացումներու խոց ու բոց յառաջացնելու մասին: Այլապէս, վաղը ուշ կ'ըլլայ:

Զգո՛՛յ՛, դարը գէշ է, կեանքի պայմանները դաւաճան են, իսկ մեր նորահաս սերունդները ձգուած, լքուած են ժամանակի քմահաճոյքէն, հովերէն տարուբեր: Մինչ հայ եկեղեցին կարծես կը մրափէ: Կուսակցութիւնները տակաւ կը նահանջեն: Մեր մարզական միութիւնները փակուած են իրենք իրենց նեղ սահմաններուն մէջ, առանց ընդլայնուելու միջոց ունենալու: Իսկ մեր ուսանողութեան հարիւրէն 93ը պետական դպրոց կը յաճախէ, մասամբ հայ դպրոցներու անբաւարարութենէն ու մասամբ՝ մեր դպրոցներու սակիւն ծանրութենէն խուսափելու:

Այս երեւոյթներուն առջեւ, ակամայ կը տարուիմ յիշելու հանգուցեալ հօրս մէկ ակնարկութիւնը: Հայրս կ'ըսէր.

- Տղա՛ս, 1900էն 1915 թուականներուն միջեւ Սլիւանի դաշտ-պատմական Տիգրանակերտ կոչուած տարածքին վրայ ցանցնուած քանի մը հարիւր հայ գիւղերու հայ բնակչութիւնը մնացած էր առանց եկեղեցիի, առանց տէրտէրի: Ոչ խունկ, ոչ կնունք, ոչ օրհներգ եւ ոչ եկեղեցական օրէնք կար: Պոլսոյ հայ մեծերը, Պատրիարքարանը նստած էին անհոգ ու անտարբեր, մինչ դաշտի հայ գիւղացիները ձգուած, լքուած էին քիւրտ պէկերու, աղաներու քմահաճոյքին...

Գիտենք հետագային պատահածը՝ մէկ մասը ջարդուեցաւ, մէկ մասն այլ քրտացաւ: Այո՛, մէկ մասն այլ քրտացա՛ւ, քրտացա՛ւ շնորհիւ... փնտռեցէք... Եւ հիմա երբեք չհամոզուիք, որ մեր ցանած ազգային քանի մը հունտերով, մեր քանի մը դպրոցներով, մենք պիտի կարենանք գալիք սերունդները հայ պահել:

Դպրոցներու լայն ցանցին հետ հարկ է, որ ազգային հպարտանքի նոր պատգամ, ազգային լինելութեան նոր Աւետարան տանք հայ տղուն ձեռքը: Այլապէս... գացէք, հարցուցէք քրտացած հայ մարդուն: Այլապէս... այսօր ազգովին ի՞նչ կ'ընենք մենք, երբ թուրքը գիտէ այլազգը թրքացնել, երբ թուրքը գիտէ իր խօսքով ու երգով մեր տունները մտնել: Իսկ մենք, իսկ մենք, ի՞նչ կ'ընենք հայ տղան հայ պահելու համար:

with the complements of

Restaurant Al-Mayass

ԱԿՆԱՐԿ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՖՈՒԹՊՈՒԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Արագ ակնարկ մը նետելով եւրոպական երկիրներու ֆուտբոլի ախոյեանութիւններուն վրայ, անմիջապէս պիտի նկատենք կարգ մը երեւոյթներ, որոնք ի յայտ եկան մասնաւորաբար վերջին տասնամեակին:

Առաջին հերթին, ֆուտբոլը դարձած է արագութեան եւ ուժի (physique) վրայ հիմնուած խաղ մը: Ան կորսնցուցած է իր նախկին դիտարժանութիւնը, որպէս գեղեցկութիւն: Օրըստօրէ գգալիօրէն կը նուազի թեքնիքը, որուն իբրեւ հետեւանք հետզհետէ կը պակսին կոլառատ մրցումները:

Վերջին տասնամեակին սկսած է նուազիլ նաեւ «աստղեր»-ը երեւոյթը, որ նոյնպէս հետեւանք է արդի ֆուտբոլի խաղաձեւին: Այսօր չկան Փելէներ, Քրուշֆներ, Փլաթինիներ, Մարատոններ եւ այլն: Լաւ կամ ամբողջական ֆուտբոլիստը չափանիշ չէ «աստղ» նկատուելու: Այս երեւոյթը ակներեւ է ոչ միայն ակումբներու, այլեւ ազգային հաւաքականներու պարագային: Այսպէս, Եւրոպայի 2008ի ախոյեան Սպանիոյ կազմը «աստղ» չունէր: Նոյնպէս, 2006ի Մոնտիալի ախոյեան Իտալիան իր կազմին մէջ «աստղ» չունէր: Մինչդեռ 1974ի Հոլանտան, 1982ի Ֆրանսան եւ Պրագիլը, 1986ի Պրագիլը եւ Ֆրանսան, 1990ի Անգլիան, 1994ի Իտալիան, 1999ի Պրագիլը, հակառակ ախոյեան չհանդիսանալու, ունէին աստղեր: Նոյնը կարելի է ըսել նաեւ ակումբներու համար:

Այսօրուան ֆուտբոլի մէջ գրեթէ չկան կանխատեսելի արդիւնքներով մրցումներ: Ճիշդ է, որ աստղաբաշխական գումարներու շնորհիւ կարգ մը խումբեր տիրական ներկայութիւն դարձած են թէ՛ իրենց երկրի ախոյեանութիւններուն եւ թէ՛ եւրոպական մրցաշարքերուն, այսուհանդերձ համեմատաբար «թոյլ» խումբերը այդքան ալ դիւրին պատառներ չեն իրենց հօր մրցակիցներուն, ինչպէս 20 կամ 30 տարի առաջ: Օրինակի համար, 25 տարի առաջ Ռէալ Մատրիտ եթէ պիտի մրցէր այդ օրերու Սպանիոյ ախոյեանութեան 10-20րդ դիրքերուն միջեւ գտնուող ակումբի մը դէմ, մրցումը հաստատ Մատրիտին էր: Այսօր կարելի չէ ըսել թէ Ռէալ Մատրիտ ապահով յաղթանակով կրնայ դուրս գալ նման մրցումէ մը:

Այսօրուան ֆուտբոլը ստեղծած է նաեւ նոր իրավիճակ: Ինչպէս նշեցինք, մեծ գումարներու շնորհիւ կարգ մը խումբեր սկսած են դառնալ անմրցելի: Ճիշդ է որ միշտ ալ եղած են



զօրաւոր եւ տկար խումբեր, սակայն շատ յաճախ միջակ կամ ոչ շատ զօրաւոր խումբեր յամառ պայքարով կը տիրանային իրենց երկրի ախոյեանութեան կամ դժուար կը զիջէին այդ տիտղոսը: Այս երեւոյթը հիմա կը բացակայի եւրոպական երկիրներու ախոյեանութիւններէն: Այսպէս.-

Անգլիոյ մէջ վերջին տասը տարիներուն ախոյեանութեան համար կը պայքարին միայն չորս խումբեր՝ Մ. Եոլնայթըտ, Արսենալ, Չելսի եւ Լիվըրփուլ: Բոլոր տուեալները ցոյց կու տան, թէ Անգլիոյ ախոյեանութիւնը այս տարի եւս պիտի սահմանափակուի այս չորս խումբերուն միջեւ եւ դժուար թէ ճորջ խումբ մը կարենայ տիտղոսը խլել անոնցմէ:

Գերմանիոյ հսկան՝ Պ. Միւնխի կը մնայ տիտղոսին թիւ մէկ թեկնածուն: Համպուրկ, Շթուլթկարթ, Շալքէ, Պրեմըն կրնան լաւ արդիւնքներ արձանագրել, սակայն չեն կրնար արգելք ըլլալ Միւնխի յաւակնութիւններուն:

Սպանիոյ մէջ պայքարը պիտի ըլլայ Մատրիտի եւ Պարսելոնայի միջեւ: Վերջին տարիներու համաձայն, միւս ակումբները՝ Ա. Մատրիտ, Վիլարէալ, Սելիլլա, Վալենսիա եւ այլն կրնան Ռէալի կամ Պարսայի հաշիւները խանգարել, բայց լուրջ մրցակիցներ դառնալէ հեռու են:

Իտալիոյ մէջ, Ինթէր պիտի փորձէ կրկնել վերջին տարիներու իր սխրանքը: Եոլվենթուս եւ Ա.Սէ.Միլան տակաւին հոգեբանականօրէն չեն թօթափած 2006ի իրենց պատիօն հետեւանքները: Ա.էս. Ռոմա անհրաժեշտ ուժականութիւնը չունի Ինթէրին մրցակից դառնալու: Այլ խօսքով, բոլոր խումբերն ալ կրնան դանդաղեցնել Ինթէրի յառաջիադաջը, սակայն արգելք չեն կրնար ըլլալ անոր:

Հակառակ այս ժխտական երեւոյթներուն, եւրոպական ֆուտբոլը կը մնայ հետաքրքրական: Հաւանաբար ինքը՝ ֆուտբոլը այնքան խոր թափանցած է մարդոց հոգիներուն եւ մտքերուն մէջ, որ անոնց համար կարեւորը ֆուտբոլի դիտելն է ու նախասիրած խումբին յաղթանակն է...

Այս պարագային, ֆուտբոլի նշանաբանը դարձած է՝ կարեւորը յաղթելն է:



Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ԵՒ «Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ»Ի 50ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՀԱՆՌԻՍՈՒԹԻՒՆ ՄՈՆԹՐԷԱԻ ՄԷՋ



- ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՅԱՏՈՒԿ ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐՈՎ ԿԸ ՊԱՏՈՒՅՎ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈՒԲԵԱՆԸ, ՀՐԱՉ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԸ ԵՒ ՍԵՒՐԱԿ ՊՈՒՐՄԱԼԵԱՆԸ
- ՉՈՐՍ ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՆ «ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆ, ԻՍԿ ԵՂԲ. ՏԻԳՐԱՆ ՀԱՃԻԹԵԱՆ ՅԵՏ ՄԱՀՈՒ ԿՐԻՋԱՆԱՆԱՅ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ
- ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ Ի ՅԻՇԱՏԱԿ, ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՀԱՅԿ ԵՒ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԸ ՆՈՒՒՐԵՆ 15 ՀԱԶԱՐ ՏՈՒԱՐ, ԻՍԿ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ՝ 10 ՀԱԶԱՐ ՏՈՒԱՐ

Մոսկվա Թօփուղեան ՄՈՆԹՐԷԱԼ

15 Նոյեմբեր 2008ին մոսկովայի թփուղեանը եկաւ անգամ մը եւս իր սէրն ու գուրգուրանքը արտայայտելու Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ, խանդավառ բազմութեամբ լեցնելով «Հ.Մ.Ը.Մ.-Կամք»ի ընդարձակ մարզասրահը:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ Մոնթրէալի «Հ.Մ.Ը.Մ.-Կամք» մասնաճիւղի վարչութեան կազմակերպած այս փառաշուք հանդիսութեան իր բարձր հովանաւորութիւնը

չնորհած էր Գանատայի Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեան, իսկ նախագահութիւնը ստանձնած էին գաղութին մէջ ազգային, մարզական եւ բարեսիրական հարուստ վաստակ ունեցող տէր եւ տիկ. Հայկ եւ Անահիտ (Տէր Կարապետեան) Մարգարեաններ: Ներկաներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Արմէն Կէտիկեան եւ Վահրամ Դանիէլեան:

Մոնթրէալի «Հ.Մ.Ը.Մ.-Կամք» մասնաճիւղը բացառիկ երեւոյթ է գաղութին մէջ: Մինչ հայկական բոլոր կազմակերպութիւնները մտահոգուած են իրենց անդամներու տարիքի յառաջացմամբ,

Հ.Մ.Ը.Մ. օր աւուր կ'երիտասարդանայ եւ 800է աւելի սկաւտներով, մարզիկներով ու անդամներով, գաղութին կը հայթայթէ «մարմնով ու մտքով հսկայ դարձած», ղեկավարելու պատրաստ թարմ ուժեր: Ահա այս իրողութիւնն է պատճառը, որ ժամանակէն առաջ արդէն խանդավառ ժողովուրդը ակնդէտ կը սպասէր սկաւտներու նուազախումբին, որպէսզի ընթացք տայ հանդիսութեան:

Արդարեւ, թմբկահարներու առաջնորդութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերու երկիրներու դրօշներով տողանցքէն եւ գանատական ու հայկական քայլերգներէն ետք (կատարողու-



Թեամբ Յովիկ Պիլեմճեանի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ տիկ. Անի Թորիկեան-Պապիկեանի), քոյր Սօսի Արապեան բացուած յայտարարեց հանդիսութիւնը: Բեմը զարդարուած էր Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Յովհաննէս Հինդլեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Շաւարշ Քրիսեանի մեծադիր նկարներով: Իսկ մոգական պատկերով յարգանք ընծայուեցաւ շրջանի հանգուցեալ եղբայրներու յիշատակին:

Յաջորդաբար խօսքեր աւոյն «Հ.Մ.Ը.Մ.-Կամք»ի վարչութեան ատենապետ եղբ. Ռիչըրտ Մեքըռնեան, Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաբգէն Կարապետեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վաղարշ Էհրամճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան եւ Հայաստանի դեսպանատան հաւատարմատար Արման Յակոբեան, որոնք արժանի գնահատանք ընծայեցին Հ.Մ.Ը.Մ.ի տարած նուիրեալ աշխատանքին՝ նոր սերունդներու ազգային, հայրենասիրական եւ մարդկայնական վեհ գգացումներու փոխանցման համար:

Օրուան պատգամաբերն էր վաստակաշատ միութենական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամ եղբ. Վարուժան Սերոբեան (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 3-5):

Այնուհետեւ, Թորոնթոյէն Մարիա եւ Վանիա Քէշիշեաններ «Հայաստան»



Յատուկ յուշատախտակի արժանացած եղբայրներ:



«Ծառայութեան» շքանշանի արժանացած քոյրեր եւ եղբայրներ Շրջանային Վարչութեան անդամներու հետ:

գուգերգով յատուկ փայլք տուին յայտագրին:

Ապա, յաջորդաբար, զանազան կարգի յուշատախտակներ ստացան Մոնթրէլայի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Ֆուլթոն լիստները եւ առաջին քանի մը տարիներու վարչականները, նաեւ՝ առաջին սկաուտ խմբապետ եղբ. Պերճ Աճէմեան: Իբրեւ բացառիկ մարզիչ՝ եղբ. Վարուժան Զուրիկեան եւ իբրեւ բացառիկ մարզիկ՝ եղբ. Ռոպէր Թուխմանեան:

Յուզադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի երկարամեայ գործունէութեան նուիրուած

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան Տիգրան Յաճէթեանի շնորհուած «Արտակարգ» պատուանշանը կը յանձնէ տիկնոջ՝ Տիանա Յաճէթեանին:

տեսերիզ մը՝ եղբ. Վարդան Բաբախեանի պատրաստութեամբ: Տեսերիզը շատերու մօտ արթնցուց հին ու քաղցր յիշատակներ:

Վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ կատարուած մոմավառութենէ ետք, բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Մոսիկ Թօփուզեան, որ ներկայացնելէ ետք հակիրճ կենսագրականներ, կարգով հրաւիրեց եղբայրներ Լեւոն Արապեանը, Մկո Մղտեսեանը եւ քոյրեր Աստղիկ Տէր Կարապետեան-Շամլեանը եւ Անահիտ Տէր Կարապետեան-Մարգարեանը, որոնցմէ իւրաքանչիւրը Շրջանային Վարչութեան անդամներու ձեռամբ ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան: Ապա, եղբ. Թօփուզեան բեմ հրաւիրեց եղբայրներ Սեդրակ Պուրսալեանը, Հրաչ Տէր Սարգիսեանը եւ Վա-

րուժան Սերոբեանը, որպէսզի ստանան յատուկ յուշանուէրներ, միութենական եւ ազգային իրենց երկարամեայ ծառայութիւններուն համար: Եւ վերջապէս, բեմ հրաւիրուեցաւ տիկ. Տիանա Հաճէթեան, որ ողբացեալ ամուսինին յիշատակին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու՝ Արմէն Կէտիկեանի եւ Վահրամ Դանիէլեանի ձեռամբ ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշան: Այս պատուանշանը Գանատայի Շրջանային Վարչութեան խնդրանքով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ յետ մահու եղբ. Տիգրան Հաճէթեանին շնորհուեցաւ՝ միութենական, եկեղեցական եւ ազգային վաստակաշատ ու բարերար գործունէութեան համար:

90ամեակի ուրախ առիթով, տէր եւ տիկ. Հայկ եւ Անահիտ Մարգարեաններ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նուիրեցին 15.000 տողար, իսկ Գանատայի Շրջանային Վարչութեան՝ 10.000 տողար: Տիկ. Տիանա Հաճէթեան եղբ.



Տիգրան Հաճէթեանի յիշատակին նուիրեց 5.000 տողար, իսկ պրն. Արմենակ Ալաճաճեան, Թորոնթոյէն, նուիրեց 5.000 տողար: Եղան այլ նուիրատուութիւններ եւս:

Հանդիսութեան փակման խօսքով հանդէս եկաւ Թեմի Առաջնորդ՝ Խատակ Արք. Յակոբեան: Ան իր խօսքին մէջ յիշեցուց Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորու-

թիւնը եւ առաքելութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ, աշխարհի չորս ծագերէն մինչեւ Հայաստան եւ վերջերս իր նոր հիմնուած մասնաճիւղով՝ Մոսկուայի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ դաստիարակուած անդամներ կը տեսնենք մեր բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու պատասխանատու պաշտօններուն վրայ, ըսաւ Առաջնորդը եւ շնորհակարտեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը իր 90րդ տարեդարձին առիթով: Ապա, «Պահպանիչ»ով ան փակեց իր խօսքը:

Ձեռնարկը շարունակուեցաւ խրախճանքի բաժինով, որ տեւեց մինչեւ առաւօտեան փոքր ժամեր:

Գնահատելի էր Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաճիւղի վարչութեան եւ կազմակերպիչ յանձնախումբին տարած աշխատանքը, գեղեցիկ եւ միութեան պատուաբեր նման ձեռնարկ մը յաջողութեամբ կազմակերպած ըլլալուն համար:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԵՄԻՆԱՐՆԵՐԸ



Մոսկի Թոփուզեան ՄՈՆԹՐԵԱԼ

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի սկաուտական խմբապետական ժողով-սեմինարը տեղի ունեցավ Շաբաթ, 20 Սեպտեմբեր 2008ին, միօրեայ տեղափոխմամբ, Քինկրաթնի մէջ: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներ, որոնց կողքին՝ Մոնթրէյալի, Թորոնթոյի եւ Քէմպրիճի մասնաճիւղերէն վարչականներ, Սկաուտ. Խորհուրդի անդամներ, խմբապետ-խմբապետուհիներ, փոխ-խմբապետ-խմբապետուհիներ եւ օգնականներ, ընդհանուրը 48 հոգի: Հանդիպումը բաժնուած էր երկու մասի: Կէսօրէ առաջ տեղի ունեցաւ սկաուտական ժողով, ուր մասնաճիւղերու հակիրճ զեկոյցներէն ետք, կատարուեցաւ շրջանի սկաուտական միջ-մասնաճիւղային բանակումին արժեւորումը: Այս բանակումը տեղի կ'ունենայ չորս տարին անգամ մը: Իսկ կէսօրէ ետք, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամները փոխանցեցին դաստիարակչական եւ կազմակերպչական չորս նիւթեր:

Ժողով-սեմինարը իր աշխատանքները ամբողջացուց կէսօրէ ետք ժամը 5ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

Մարզական սեմինարը տեղի ունեցաւ օր մը ետք, Կիրակի, 21 Սեպտեմբերին, նոյն վայրին մէջ: Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեան անդամներու կողքին, ներկայ էին Մոնթրէյալի, Թորոնթոյի եւ Քէմպրիճի մասնաճիւղերէն վարչականներ, մարզական խորհուրդի անդամներ, մարզիչներ եւ

պատասխանատուներ, ընդհանուրը՝ 25 հոգի: Սեմինարին գլխաւոր նիւթն էր համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական խաղերը, որոնք տեղի պիտի ունենան 1-8 Օգոստոս 2009ին, Հայաստանի մէջ: Ժողովը մանրամասնօրէն քննեց շրջանի մասնակցութեան համար կատարուելիք աշխատանքները (մարզաձեւեր, յանձնախումբեր, խումբերու զտում, միացեալ փորձեր): Կէսօրուան դադարէն ետք, եղբ. Վահան Զալիքեան փոխանցեց դաստիարակչական նիւթ մը՝ «Մարզական փորձերու յայտագրի պատրաստութիւն»: Ժողովականները հետաքրքրութեամբ հետեւեցան նիւթին, որ ամբողջացաւ իրենց ուղղած գանազան հարցումներով:

Սեմինարը փակուեցաւ կէսօրէ ետք, ժամը 5ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՄՍԱՅԱՆՔ

**ԻՆՆՍՈՒՆԱՄԵԱԿԻ
ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ
ԳԱՆԱՍՍ**

Հրատարակուիւն՝
Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի
Շրջանային Վարչութեան

ԳԱՆԱՍՍ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱԲՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՒՊԻ ՄԷՋ



Գեորգ Յակոբճանեան ՀԱԼԷՊ

Ժ ող ո վ ու ը ղ ն ե ռ ու պատմութեան մէջ թուականներ կան, որոնք անկիւնադարձային նշանակութիւն ունին, որովհետեւ անոնք ապահոված են տուեալ ժողովուրդին գոյութիւնը, յարատեւութիւնը, բարգաւաճումն ու կենսունակութիւնը: 1918ը հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ կերպարանափոխիչ, հրաշագործ, յա-

ւերժախօս տարի մը հանդիսացաւ: 1918ին, երբ Երեւանէն անկախութեան արեգակը կը բարձրանար, երբ Արամ Մանուկեանն ու Անդրանիկը, Դրոն ու Նժդեհը բարձրաճակատ կը ճախրէին ազատ ու անկախ հայրենիքի երկնակամարին վրայ, Պոլիսէն նոր նուաճումի մը, նոր իրագործումի մը աւետիսը կը շեփորահարուէր: Պոլսոյ մէջ, Յակոբեաններու, Սիրունիներու, Հինդլեաններու ազգօգուտ մտայղացման շնորհիւ կեանքի կը կոչուէր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որուն հիմնադրութեան 90ամեակը արժանաւոր կերպով նշուեցաւ 2008ին:

Հալէպի մէջ, 90ամեակի յրեթեւական փառաւոր տօնակատարութիւնը տեղի ունե-

Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան կը ծանօթանայ հանդիսութեան մուտքին ներկայացուած ցուցահանդեսին:

ցաւ կիրակի, 30 Նոյեմբեր 2008ի երեկոյեան ժամը 7ին, «Գ. Եսայեան» սրահին մէջ:

Նախքան հանդիսութիւնը, սրահին մուտքին, սկառուտ քոյր-եղբայրները պատրաստած էին կոկիկ ցուցահանդէս մը, որ կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.ի բեղուն գործունէութենէն պատկերներ, ձեռագրեր, աշխատանքներ, խօսքեր, սկառուտական գոյքեր, յիշատակի նկարներ, Զատկուան շնորհաւորական քարթեր, փաստաթուղթեր, հրատարակութիւններ, պաշտօնաթերթեր, անցեալէն ու ներկայէն գեղեցիկ պատառիկներ: Հանդիսատեսը սրահ չմտած արդէն իսկ կը վերակենդանացնէր անցեալի իր յիշատակները եւ այդ տրամադրութեամբ կ'անցնէր հանդիսութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Երջանային Վարչութեան կազմակերպած այս տօնակատարութեան ներկայ էին Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան, Վեր. Յարութիւն Սելիմեան նախագահ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան, Բերիոյ Թեմի Քաղաքական Ժողովի ներկայացուցիչներ, քահանայ հայրեր, հալէպահայ քաղաքական, մարզական, երիտասարդական, մշակութա-





Ձախին՝ Հ.Ա.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղի զոյգ վարչութիւններուն խօսքը կը փոխանցէ եղբ. տոքթ. Արրահամ Եագուպեան: Աջին՝ Հ.Ա.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը կը փոխանցէ ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Առաքելեան:

յին եւ բարեսիրական միութիւններուն ներկայացուցիչներ եւ համակիր հանդիսականներ:

Տօնակատարութեան սկիզբը, Հ.Մ.-Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղի շեփորախումբին կատարողութեամբ հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները: Բարի գալուստի բացման խօսքով հանդէս եկաւ եղբ. Գէորգ Յակոբճեանեան, իսկ արաբերէնով Հ.Մ.-Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղի զոյգ վարչութիւններուն խօսքը փոխանցեց եղբ. տոքթ. Աբրահամ Եագուպեան:

Տօնակատարութեան կազմակերպիչ մարմնի՝ Հ.Մ.-Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան: Ան ըսաւ. «Այսօր Հ.Մ.-Ը.Մ.ի 90ամեակը սովորական յիշատակի նշում մը չէ մեզի համար, այլ՝ յաղթական երթի մը ընթացքը, որ պիտի շարունակէ իր սրբազան առաքելութիւնը Սփիւռքի եւ հայրենիքի մէջ, Սփիւռքի մէջ պատրաստելով հայրենիքին համար անկախատենչ եւ հայրենաբաղձ երիտասարդներու «կամաւոր բանակ», իսկ Հայաստանի մէջ՝ իր արմատներուն վերազարձած, հայրենակերտումի աշխատանքին ծառայելու «միշտ պատրաստ» յանձնառու սերունդներ»:

Գեղարուեստական յայտագրի առաջին բաժնով երոյթ ունեցան ջութակա-

հար ՄՏեր Տաւուտեան եւ դաշնակահարուհի Ռուզան Պարսումեան, հանդիսատեսը հմայելով Բարիտոգարեանի մշակած «Սիրուհի» երաժշտական ներկայացումով:

Ապա, խօսք առաւ Լեւոն Տանայեան, ներկայացնելու համար Համազգային Հայ կրթական եւ Մշակութային Միութեան Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը: Ան իր խօսքին մէջ շնորհակտրեց Հ.Մ.-Ը.Մ.ի 90ամեակը եւ ըսաւ. «Ուրախ ենք, որ ինչպէս անցեալին, այսօր եւս հաստատակամ իր ուխտին՝ «Բարձրացիր-բարձրացուր»ին, Հ.Մ.-Ը.Մ. աննկուն կամքով կը շարունակէ իր ազգօգուտ գործունէութիւնը, օրէ

օր ծաւալող իր կառույցներով եւ նորանոր նուաճումներով»:

Յայտագիրը շարունակուեցաւ քոյր Ռիթա Կաղեան-Տիքպիլքեանի տպաւորիչ ասմունքով: Ան ասմունքեց «Ոտքի, Հ.Մ.-Ը.Մ.ը կ'անցնի» բանաստեղծութիւնը:

Ասմունքէն ետք, բեմ բարձրացաւ Ս.Օ.Խի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սիրվա Եուզպաշեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Հ.Մ.-Ը.Մ.ը իր 90ամեայ պատմութեամբ, ազգային անուրանալի վաստակով, արդար հպարտութեամբ արդէն մտած է հայոց պատմութեան շքեղ անդամատանէն ներս, իբրեւ անբաժանելի մէկ մասնիկը անոր: Յար-





**Տօնակատարութեան պատգամախօս՝ եղբ. Նշան Օղիկեան
եւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան:**

զանք միայն կարելի է ունենալ այս կազմակերպութեան նկատմամբ, որ կենսունակութեամբ, ազգային ամենասրբազան ականդներուն հաւատարիմ, անշահախնդիր նուիրումով լծուած է հայ սերունդներու պահպանման, անոր ֆիզիքական բարորութեան եւ հոգեկան կերտումի վե՛հ գործին»:

Ապա, «Հայաստան» երգով ելոյթ ունեցան Վարդան Նազարեան, Վահէ Սարգիսեան, Շիրազ Սարգիսեան, Պաղտիկ Քիւրճումեան, ղեկավարութեամբ՝ Գայիանէ էլիզպարեան-Գալէմբերեանի, գործիքաւորում՝ Արթիւր Գալէմբերեանի:

Կարգը հասած էր Հ.Մ.Ը.Մ.ի 90ամ-

եայ փառապանծ պատմութիւնը ներկայացնող տեսերիզի ցուցադրութեան: Տեսերիզին միջոցով փոխանցուեցան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նախորդող պայմանները, հիմնադրութիւնը, կազմաւորումը, ծաւալումը, մասնաճիւղերու յառաջացումը, հայրենիքի մէջ վերընճիւղումը, տողանցքները, միջ-մասնաճիւղային խաղերը եւ ներկայ աշխատանքները: Ցուցադրութիւնը հանդիսատեսին բարձր գնահատանքին արժանացաւ, իսկ սրահին մէջ տիրող ցնծութեան ու պարծանքի զգացումները կրկնապատկուեցան:

Օրուան բանախօսն էր տարիներու ծառայող, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ա-

կան եղբ. Նշան Օղիկեան: Ան իր նախաբանին մէջ փոխաբերական պատկերներով ներկայացուց հայ ժողովուրդին ընդհանուր իրավիճակը 1918 թուականին եւ հասարակ յայտարարներ ուր-ւազծեց Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան միջեւ: Ան նաեւ խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր սերունդին ունեցած ազգօգուտ դերակատարութեան եւ հայրենիք մուտքին մասին:

Եղբ. Օղիկեան իր խօսքը շարունակելով անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի տարածման պայմաններուն Սփիւռքի եւ յատկապէս Սուրիոյ մէջ: Ան շեշտեց կարեւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի կազմակերպած անմոռանալի տողանցքներուն՝ ըսելով. «Շեփորախումբէն առաջ կամ վերջ քալած են դրօշակակիրները, իր ծամերը հովուն տուած սիրուն աղջկայ մը գեղեցկութեամբ, ցուցադրելով քաղաքացիական դրօշին հետ հայրենի Եռագոյնը: Այսպէս եղած է Հ.Մ.Ը.Մ.ի տողանցքը, զոր այսօր ականդական կ'անուանենք: Հ.Մ.Ը.Մ.ը վերակենդանացաւ եւ կոփուեցաւ Հալէպի միջ-մասնաճիւղային հանդիպումներուն ընթացքին: Հ.Մ.Ը.Մ.ը Հ.Մ.Ը.Մ. եղաւ Սուրիոյ միջ-մասնաճիւղային հանդիպումներով, որովհետեւ սերունդ մը անով լիացաւ, սերունդ մը զայն ժառանգեց ու փոխանցեց դրօշաւի դրօշին հետեւողականութեամբ»:





Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին արժանացած քոյրեր եւ եղբայրներ:

Այնուհետեւ, բանախօսը իր խօսքը շարունակեց անգամ մը եւս հաստատելով, թէ Հ.Մ.Ը.Մ.ը ինքզինք խարսխեց անժամանցելի սկզբունքներու վրայ եւ սերունդները թրծուեցան բարձրանալու եւ բարձրացնելու համար: Ան յիշեց երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսին վկայութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր ծառայութեան մասին: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած միութիւն մը ըլլալու իրականութեան անդրադառնալով, ան յիշեցուց, որ այսօր 100 մասնաճիւղ ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ 25 հազար երիտասարդ-երիտասարդուհի կը ծառայէ: Ան ըսաւ. «100րդ մասնաճիւղին արձագանգը Մոսկուայէն եկաւ քանի մը ամիս առաջ, Սուրիոյ մարզարիտներու բուրմունքով լիացած»:

Իր խօսքին մէջ, եղբ. Օղիկեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի դասերը միայն անցեալի չէ որ կը պատկանին: Ան օրինակներ տուաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի մարզական խումբերու արձանագրած նորագոյն յաղթանակներէն:

Բանախօսը իր ազգայնաշունչ ելոյթը աւարտեց հետեւեալ խօսքերով. «Ու այս բոլորին հետ, երբ շեփորախումբերը պայթեցան, թմբուկները գետինը ցնցեցին ու Հ.Մ.Ը.Մ.ը քալեց, իւրաքան-

չիւր հայ ինքզինքը հայրենի հողին վրայ զգաց: Այո, Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհը Հայաստանի վերածեց... ողջ՞նչ Հ.Մ.Ը.Մ.ին»:

Գեղարուեստական յայտագրի վերջին բաժնով հանդէս եկաւ եղբ. Շղիա Քրիէճեան: Ան երգեց «Նրդ Հ.Մ.Ը.Մ.»-ին:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի յարկին տակ տարիներ ծառայած քոյր-եղբայրներու «Ծառայութեան» շքանշանի տուչութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետը այս առիթով բեմ հրաւիրեց Սրբազան Հայրը՝ միասնաբար պարգեւատրելու համար քոյրեր Քնար Ֆոռունճեան-Քէօչկէրեանը, Զեփիւն Սուդալեանը, Մարի Սուրատեանը, եղբայրներ Ճորճ Տաուլէն, Կարպիս Թովմասեանը, Մովսէս Քէօչկէրեանը, Մանուկ Գազէլեանը, Անդրանիկ Լախոյեանը, Տիգրան Տիգրանեանը, Կարօ Մելքոնեանը, յետ մահու՝ եղբայրներ Լեւոն Էսմէրեանն ու Գէորգ Տանայեանը: Պարգեւատրումէն բանաւոր պատճառներով կը բացակայէր եղբ. Գօգօ Քրիէճեան:

Հուսկ, խօսք առաւ Սրբազան Հայրը եւ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակն ու Հ.Մ.Ը.Մ.ական նուիրեալները: Ան ըսաւ. «Խօսիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը նը-

շանակէ պատմել մեր ժողովուրդին 90 տարիներու սխրագործութիւններն ու յաղթանակները»: Հ.Մ.Ը.Մ.ի ստանձնած դերակատարութեան մասին արտայայտուելով՝ Սրբազան Հայրը աւելցուց. «Կը հաւատամ, որ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակը մեզի համար նոր մարտահրաւէր մը կը բանայ, հաւատարիմ ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան»: Ան իր խօսքը շարունակելով անդրադարձաւ այն իրականութեան, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ կեանքին մէջ լաւատեսութեան երեւոյթ է. «Հ.Մ.Ը.Մ.ը երիտասարդ ու պիտի աւելցնեմ երիտասարդացնող է, դժուարութիւններուն դիմադրող ու յաղթական դուրս եկող միութիւն է», ըսաւ ան եւ իր խօսքը եզրափակեց ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.ը ինքզինք վերարթեւորելու, ազգային արժէքներով գոտեպնդուելու մարտահրաւէրին առջեւ կանգնած է այսօր: Յառա՛ջ նահատակ ցեղի անմահներ», յառա՛ջ առաւել կազմակերպ ու ճառագայթող, յառա՛ջ դէպի նոր յաղթանակներ ու նո՛ր նուաճումներ»:

Շեփորախումբի «Յառաջ նահատակ» քայլերգի նուագով եւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակի նուիրուած յոբելեանական տօնակատարութիւնը:



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԱՄԲԱՐԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Րաֆֆի Սիլվահեան ՅԱԼԷՊ


Հ.Մ.Ը.Մ.Ի 90ամեակի տօնակատարութիւններու շարքին, յոբելեանական հանդիսութենէն առաջ, Կիրակի, 30 Նոյեմբեր 2008ի առաւօտեան, Հայկազ Մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի Սկսուտ. Խորհուրդին կազմակերպութեամբ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին:

Հոգեհանգիստէն ետք, Սուրբ Ծրջանային Վարչութեան եւ Ծրջանային Սկսուտ. Խորհուրդի անդամները, Հայկազ Մասնաճիւղի վարչութիւնն ու Սկսուտ. Խորհուրդը, մասնաճիւղի խմբագրատեղիները եւ սկսուտ քոյրերն ու եղբայրները մեկնեցան գերեզմանատուն:

Գերեզմանատան մուտքէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի դամբարան տեղի ունեցաւ տողանցք, շեփորախումբի առաջնորդութեամբ: Դամբարանին առջեւ կատարուեցաւ ծաղկեպսակի

գետեղում: Ապա, Վահան Ծ. Վրդ. Պէրպէրեանի «Պահպանիչ»էն ետք, օրուան պատգամը արտասանեց Սուրբ Ծրջանային Սկսուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան անդրադարձաւ նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ի դերին եւ ըսաւ. «Հայ իրակառնութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ը 90 տարիէ ի վեր միակ միութիւնն է, որ իր եզակի կազմակերպութեամբ եւ կարողականութեամբ կարողացած է միատեղել մարզական եւ սկսուտական կեանքով հետաքրքրուող հայ նորահաս սերունդը, զայն օժտելով սկսուտական դիտելիքներու կողքին՝ հայեցի դաստիարակութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ը 1918ին քանի մը հաւատաւորներու նուիրումով ստեղծուած, այսօր դալարագեղ ու դարաւոր ծառի մը նման ուռճացած ու տարածուած է, եւ այսօր արդէն իսկ աշխարհատարած իր 100 մասնաճիւղերով ունի բազմահազար անդամներ, որոնք հաւատարմօրէն կ'իրագործեն միութեան նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»:

Հ.Մ.Ը.Մ.ի դամբարան այցելութիւնը իր աւարտին հասաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europohotel.am

Reservations

www.europohotel.am



ՄԻՆՉ ԱՂՋԿԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ԳՐԱԻՖ ՍՈՒՐԻՈՅ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՐՔԸ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՂՈՑ ԵՒ ԱՂՋԿԱՆՑ
ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԸ

Ս Ո Ւ Ր Ի Ո Յ Ա Խ Ո Յ Ե Ա Ն

«Հ.Մ.Ը.Մ., վաստակդ միշտ աւելնայ,
ամենուրեք դրօշդ միշտ բարձրանայ,
Հ.Մ.Ը.Մ. զաւակդ վեհ քեզի կու գայ,
որ քու փառքիդ իր յաղթանակն աւելնայ»:

Րաֆֆի Սիւլահեան ՅԱԼԵՊ

Հ.Մ.Ը.Մ. Սուրիոյ տղոց եւ աղջկանց պասքեթ-պոլի պատանեկան խումբերը 2008 տարեշրջանի աւարտին մեծ հպարտութիւն եւ գոհունակութիւն պարզեցին միութեան բազմահար անդամներուն եւ համակիրներուն, տիրանալով երկրի ախոյեանութեան: Տղոց պատանեկան խումբը, տասնութ տարի սպասելէ ետք, յաջողեցաւ Սուրիոյ առաջնութեան բաժակը վերադարձնել Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ: Խումբը նուաճում մը եւս աւելցուց յաջողութիւններով եւ յաղթանակներով լեցուն Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի ոսկեմատեանին մէջ, հանդիսանալով Սուրիոյ ախոյեան: Այս տիտղոսը արգասիքը եղաւ լուրջ եւ տքնաջան աշխատանքի, սկսեալ վարչական կազմէն, պատասխանատուներէն հասնելով մինչեւ մարզիչը եւ բոլոր խաղացողները:

Հ.Մ.Ը.Մ.ի խումբը առաջին հանգրուանին աղիւսակի երկրորդ դիրքը գրաւելէ ետք, ձայլաւ, Իթթիհատ եւ Ուահտէ խումբերուն հետ հասաւ աւարտական քառեակ եւ յաջողեցաւ յաջորդաբար պարտութեան մատնել մրցակից բոլոր խումբերը: Խաղացողները իրենց կորովով առիթ չտուին, որ տարիներու ախոյեան ձայլաւ եւ Իթթիհատը տիտղոս մը եւս աւելցունեն իրենց մարզական երթին վրայ: Անոնք յաջողութեամբ գործադրեցին մարզիչ Մանօ Մարգարեանի ցուցմունքները, որ իր կարգին ոչ մէկ ճիգ խնայեց խումբը Սուրիոյ պասքեթ-պոլի առաջնութեան հասցնելու համար:



Աւարտական քառեակին, Հ.Մ.Լ.Մ-ի պատանիները պարտութեան մատնեցին Ուաստէն (63-62), Ճալաար (78-70) եւ Իթթիհատը (76-66): Այս մեծ նուաճումին հերոսներն էին՝ վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յարութ Չամիչեան, մարզիչ Մանօ Մարգարեան, մարզիչի օգնական Վրգէն Թոճեան, խումբի պատասխանատուներ Սեպուհ Ղարիպեան եւ Վրէժ Մարգարեան: Մարզիկներ Յակոբ Գրճալեան (խմբապետ), Սեպուհ Խարաճեան, Յակոբ Սիւմպուլեան, Շահան Տէր Մանուէլեան, Շանթ Գալալճեան, Շանթ Կէզրիկոյիկեան, Յարութ Գամպուրեան, Ճորճ Ալթունճեան, Յակոբ Ինգնատոսեան, Յովհաննէս Պալըքճեան, Նարեկ Գարպէպեան եւ Վրգէն Մինասեան:

ՆԱԵՒ՝ ԱՂՋԿԱՆՑ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Երկար տարիներու աշխատանքի արգասիքը եղաւ նաեւ Սուրիոյ աղջկանց պատանեկան խումբին Սուրիոյ ախոյեանութեան տիրացումը: Վերջին երեք տարիներու Հալէպի ախոյեան Հ.Մ.Լ.Մ-ի պասքեթպոլի աղջկանց պատանեկան խումբը, ինչպէս տղոց կազմը, յաջողեցաւ պատուաբեր մասնակցութեամբ բարձրացնել Հ.Մ.Լ.Մ-ի դրօշը Սուրիոյ մէջ, արժանանալով ախոյեանութեան բաժակին: Հ.Մ.Լ.Մ-ական քոյրերը իրենց ամբողջ կարողութիւնը ի սպաս դրին այս մրցումներուն, որպէսզի իրենք եւս յաջողին նուաճում մը ապահովել միութեան: Յաջողութեան մէջ մեծ դեր ունեցան մասնաճիւղին վարչութիւնը, պատասխանատու կազմը եւ խումբին մարզիչ եղբ. Գէորգ Արթինեան:

Առաջին հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Լ.Մ-ի աղջիկները գրաւեցին աղիւսակի երկրորդ դիրքը, բայց կարճ ժամա-

նակամիջոցի մէջ յաջողեցան կրկնապատկել իրենց ճիգերը՝ աւելի պատուաբեր արդիւնք մը արձանագրելու համար: Աւարտական հանգրուանին, անոնք իրենց միասնականութեամբ կարողացան պարտութեան մատնել մրցակից վեց խումբեր, որոնցմէ Ճալաան Սուրիոյ վերջին վեց տարիներու ախոյեանն էր: Մրցումները տեղի ունեցան եռօրեայ տեւողութեամբ, Հալէպի Ասատ մարզադաշտին մէջ: Խումբերը կատարեցին օրական երկու մրցում: Անդրանիկ մրցումին, Հ.Մ.Լ.Մ-ի մրցակիցը դարձաւ Աշրաֆիէ Սահնայան եւ եղաւ առաջին զոհը՝ 55-41 արդիւնքով: Երկրորդ օրը, Հ.Մ.Լ.Մ-ի կազմը կատարեց երկու մրցում: Առաւօտեան ան յաջողեցաւ պարտութեան մատնել Իթթիհատը՝ 48-61 արդիւնքով, որմէ երկու ժամ ետք ան կատարեց իր երկրորդ հանդիպումը եւ դարձեալ յաղթական եկաւ՝ պարտութեան մատնելով Դամասկոսի ախոյեան Սաուրան:

Մրցաշարքին վերջին օրը Հ.Մ.Լ.Մ. կրկին ունեցաւ զոյգ հանդիպումներ: Գլխաւոր մրցումը եղաւ Հ.Մ.Լ.Մ. ընդդէմ Ճալաա: Վերջինը, որ տարիներէ ի վեր կը տիրապետէր Սուրիոյ աղջկանց պասքեթպոլի պատանեկան դահլին, չկարողացաւ դիմադրել Հ.Մ.Լ.Մ-ական քոյրերու յարձակումներուն եւ պարտութեան մատնուեցաւ՝ 44-58 արդիւնքով: Հ.Մ.Լ.Մ-ի վերջին զոհը եղաւ Դամասկոսի Քասիունը, որ պարտուեցաւ 50-44 արդիւնքով:

Այսպէսով, Հ.Մ.Լ.Մ-ի աղջկանց խումբը, տղոց խումբին նման, տիրացաւ Սուրիոյ պասքեթպոլի պատանեկան դահլին եւ արժանացաւ Ֆետերասիոնի ու մասնագէտներու գնահատանքին: Խումբը, որ վերջին երեք տարիներուն յաջողած էր տիրանալ Հալէպի ախոյեանութեան, այս անգամ արդարօրէն



իա Մակարեան, Կասիա Սարգիս, Արին Ալեքսանեան, Դալար Թաթարեան, Նէնսի Աւագեան, Սարին Գազանճեան, Վարդէնի Ներսէսեան, Գարօլ Քիլիճեան, Շաղիկ Փոնթիկեան, Արտա Սեւան Գազէլեան, Մեղրի Խպրճեան եւ Մեղրիկ Գրիգորեան:

**ԱՂՋԿԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ
ԽՈՒՄԲԸ ՍՈՒՐԻԱՅ ԵՐԿՐՈՐԴ**

Սուրիոյ ախոյեանութեան 2007-2008 տարեշրջանի մրցումներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց ներկայացուցչական խումբը, յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով, գրաւեց երկրորդ դիրքը: Առաջին հանդիսացաւ Ճալա: Աւարտական քառեակի մրցումները կատարուեցան չորս հանգրուանով, ուր իւրաքանչիւր խումբ կատարեց 12 մրցում: Հ.Մ.Ը.Մ. իր կատարած 12 մրցումներուն արձանագրեց ութ յաղթանակ:

արժանացաւ Սուրիոյ ախոյեանութեան, փաստելով որ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ կրնայ նուաճումներ արձանագրել՝ խումբի բոլոր անդամներու գործակցութեամբ: Նշենք, թէ մրցաշարին առաւելագոյն կէտերը նշանակեց քոյր Ալիսիա Մակարեան (212 կէտ):

Խումբին յաղթանակը կերտեցին.- վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յարութ Չամիչեան, խումբի պատասխանատու եղբ. Յովիկ Փայասեան, մարզիչ եղբ. Գէորգ Արթինեան, մարզիչի օգնական Դալար Արապաթեան, մարզիչուհիներ Ալիս-

Հ.Մ.Ը.Մ.ի պատանեկան խումբերուն եւ աղջկանց ներկայացուցչական խումբին յաջողութիւնները առաջինը չեն Հ.Մ.Ը.Մ.ի մարզական խումբերուն համար եւ վստահաբար վերջինը պիտի չըլլան: Այս նուաճումները պիտի չարձանագրուէին եթէ բոլորը ձեռք-ձեռքի տալով միասնաբար չաշխատէին: Թող այս յաղթանակները հիմնաքարը դառնան յառաջիկայ տարիներու իրագործումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը միշտ բարձր պահելու համար Սուրիոյ մարզական կեանքէն ներս:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՄԵՄԻՆԱՐ



դաստիարակութեան կողքին, պատասխանատուները մղել թերութիւններու եւ սխալներու դէմ պայքարելու, ներկայի արդիական միջոցները օգտագործելու, առողջ մօտեցումով եւ գործելակերպով ծառայելու, ունենալու համար «Առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ»:

Սեմինարը կատարուեցաւ խմբակային դրութեամբ: Ունեցանք երկու խմբակ՝ «Պալու» եւ «Պաղիրա»: Հարց-պատասխանի մրցումները, դաշտային խաղերը, երգերու եւ կանչերու մրցումները, նաեւ ձեռնային աշխատանքները յարմարագոյն միջոցներն էին մասնակցողներուն մէջ աշխուժացնելու համար մրցակցութեան ոգին, միշտ իրենց «լաւագոյնը» իրագործելու համար:

Գայլիկական մասնագիտական դասախօսական շարքը իր յատուկ տեղը ունէր՝ սեմինարին նպատակը շեշտելու համար մասնակից վոհմակապետ-երամապետուհիներու Հ.Մ.Լ.Մ.ական հոգիին մէջ:

Վերաորակւորման սեմինարին հիւր դասախօսներ հրահրուեցան Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրջանային Խմբապետ եղբ. Լեւոն Իսկէնտէրեան (Ի՞նչպէս վոհմակ կազմել), Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրջանային Խմբապետուհի քոյր Քնար Գալալճեան (Վոհմակապետի կոչումն ու առաքելութիւնը), նախկին խմբապետ եղբ. Վիգէն Ետալեան (Վոհմակապետի թեքնիք պարտականութիւնները), նախկին խմբապետուհի քոյր Մարալ Գալալճեան (Վոհմակի աշխատանքները վարելու ոճ) եւ Հ.Մ.Լ.Մ.ի Հայէպի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Պօղոս Պայէնոգեան (Գործունէութեան մը արժեւորումը): Սեմինարին մասնակիցները ունեցան նաեւ զրոյց մը, նիւթ՝ խմբապետ-աստիճանաւոր-վոհմակապետ փոխ յարաբերութիւնը, զրուցաժարն էր Հայէպի մասնաճիւղի խմբապետի օգնական եղբ. Արուշ Պէրպէրեան:

Սեմինարը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Կասիա Կարապետեան ՅԱԼԷՊ

Եթէ գայլիկութիւնը այդքան լաւ կը հասնուի պատասխանէ փոքրերու ձգտումներուն, պատճառը այն է, որ ան յարմարած է հոգեբանութեան բնական օրէնքներուն՝ «Վերա Պարբէլ»:

Տարեկան ընդհանուր բանակումներէն եւ ամառնային արձակուրդներէն ետք, մարդուժի պատրաստութեան եւ գոյութիւն ունեցող մարդուժի վերաորակւորման նպատակով, Հ.Մ.Լ.Մ.ի Հայէպի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի հովանաւորութեամբ, մասնաճիւղին «Շաւարշ Քրիսեան» գայլիկ-արծուիկ միաւորները կազմակերպեցին վերաորակւորման սեմինար մը, յատուկ՝ գայլիկ-արծուիկ պատասխանատուներու համար:

Սեմինարը տեղի ունեցաւ Հայէպի «Էմմանուէլ» վարժարանին մէջ, մասնակցութեամբ 25 վոհմակապետ-երամապետուհիներու:

Սեմինարին նպատակն էր, օգտակար եւ գործնական

«ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ» ԵՒ «ՇԱԲԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ» ԳԱՅԼԻԿ ԵՒ ԱՐԾՈՒԻԿ ՄԻԱՒՈՐՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Րաֆֆի Սիլահեան ՅԱԼԷՊ

5 Հոկտեմբեր 2008ը անմոռանալի օր մը եղաւ Հ.Մ.Լ.Մ.ի Հայէպի մասնաճիւղի «Գրիգոր Յակոբեան» եւ «Շաւարշ Քրիսեան» գայլիկ եւ արծուիկ միաւորներու կարմիր վոհմակներուն եւ երամներու անդամներուն, որոնք իրենց խոստումը վերանորոգելով փոխանցուեցան սկաուտական շարքեր:

Կիրակի առաւօտ, Հ.Մ.Լ.Մ.ի Հայէպի մասնաճիւղի գայլիկներն ու արծուիկները, արիններն ու արեւոյշները ներկայ գտնուեցան Ազգ. Քառէն Եփփէ ձեմարանի շրջափակին մէջ տեղի ունեցած փոխանցման արարողութեան: Բացման դրօշակի արարողութենէն ետք, փոխանցուող անդամները շրջանակ մը կազմեցին եւ վերջին անգամ ըլլալով կատարեցին



գայլիկական կեանքի ամենէն վեհ արարողութիւնը՝ մեծ կանչը, որմէ ետք անոնք ուշի-ուշով ունկնդրեցին իրենց Աքելլաներուն հրաժեշտի խօսքը: Իւրաքանչիւր Աքելլայ իր միաւորին ներկայացուց փոխանցման իմաստն ու նպատակը, անդրադառնալով թէ անոնք ամբողջացնելով իրենց գայլիկական գիտելիքները պիտի փոխանցուին սկաուտական շարքեր: Աքելլաներու խօսքէն ետք շրջանակները բացուեցան եւ անդամները ինքնավստահ ու եռանդուն՝ պարանը ցատկելով փոխանցուեցան սկաուտական շարքեր, ուր դիմաւորուեցան սկաուտ պատասխանատուներու կողմէ եւ առաջնորդուեցան իրենց խումբերը, որոնք օժտուեցան իրենց նոր անուններով: «Գրիգոր Յակոբեան» արիական խումբը կոչ-



ուեցաւ «Աքելլոր», իսկ արենոյճները՝ «Բագէ»: «Շաւարշ Գրիսեան» արիական խումբը կոչուեցաւ «Կաքաւ», իսկ արենոյճները՝ «Աղանի»:



Աւարտին, մասնաճիւղի խմբապետ եղբ. Աւետիա Տէրվիշեան շնորհակալեց փոխանցուող անդամները: Խմբապետ եղբայրը ոգեկոչեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակը եւ անդրադարձաւ սկաուտութեան նպատակին: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց մըն է, ուր յաճախողը կը դառնայ ազգասէր եւ գիտակից երիտասարդ, որ իր կարգին ջանք կը փոխանցէ գալիք սերունդներուն, իրագործելով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուրը»:

Գործունէութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Կասիա Կարապետեան
ՉԱԼԷՊ

Ազգի մը պատմութիւնը անոր կենսագրութիւնն է, որ կը սկսի ծննդեան թուականէն եւ կը հասնի մինչեւ մեր օրերը: Պատմութիւնը նաեւ ազգի մը հաւաքական յիշողութիւնն է, որ պէտք է միշտ վառ պահուի: Այս մտածումներէն մեկնած, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի «Շաւարշ Գրիսեան» արծուիկ միաւորը Կիրակի, 14 Սեպտեմբեր 2008ին այցելեց Հալէպի պետական թանգարան, ծանօթանալու համար Սուրիոյ պատմութեան եւ դարաւոր մշակոյթին:

Նախքան մեկնիլը, արծուիկները իրենց պատասխանատուներուն կողմէ անհրաժեշտ գիտելիքներ ստացան թանգարանին մասին: Անոնց խօսուեցաւ երկրի մը պատմութեան, հնու-



թիւններուն ու մշակոյթին կարեւորութեան մասին: Թանգարանին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերը տեսան հնադարեան քարտէսներ, քարերու վրայ փորագրուած սեպագիր արձանագրութիւններ, դամբարաններ, մասունքներ, չասուածներու եւ կայսրերու արձաններ, խեցեղէններ եւ այլն:



Թղթակից ՌԻՈՐԹԱՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԼԱՀԱՆՔՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԼԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ 33ՐԴ ԺՈՂՈՎԸ



ՀՄ.Ը.Մ.Ի հիմնադրու-
թեան 90ամեակի հան-
դիսութեան զուգա-
հեռ, ՀՄ.Ը.Մ.Ի Արեւելեան Մի-
ացեալ Նահանգներու ընտանիքը
երեք օրերու ընթացքին գումա-
րեց Երջանային Ներկայացուց-
չական 33րդ ժողովը, 26-28 Սեպ-
տեմբեր 2008ին, Նիւ Ճըրզիի մէջ,
մասնակցութեամբ չրջանի տասը
մասնաճիւղերու՝ Ալպընիի, Նիւ
Եորքի, Նիւ Ճըրզիի, Շիքակոյի,
Ուաշինկիթընի, Պոսթընի, Տիթ-
րոյթի, Փրովիտընսի, Տիլատեյֆ-
իոյ եւ Հարաւային Տլորիտայի
լիազօր ներկայացուցիչներու,

ՀՄ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջանային
Վարչութեան լիազօր ներկայացուցիչն եւ ՀՄ.Ը.Մ.Ի Կեդրո-
նական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Վահրամ
Դանիէլեանին, ընդհանուրը՝ 41 անդամներ: Խորհրդակցա-
կան ձայնով մասնակցողներու շարքին էին Հ.Յ.Դ. Արեւելեան
Երջանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, Համազգա-
յինի եւ Հ.Յ.Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ներկա-
յացուցիչները, ՀՄ.Ը.Մ.Ի Գանատայի Երջանային Վարչու-
թեան ներկայացուցիչ եղբ. Բաբգէն Կարապետեան,
ՀՄ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջանային
Վարչութեան անդամները, Երջանային մարզական յանձնա-
խումբի եւ Սկաուտ. Խորհուրդի ներկայացուցիչները եւ հրա-
ւիրեալներ:

Ժողովին բացումը կատարեց Երջանային Վարչութեան լիա-
զօր ներկայացուցիչ եղբայր Հրաչ Մեսրոպեան: Բարի գա-
լուստի խօսքէն ետք եղբայր խնդրեց որ ժողովը ընտրէ իր
դիւանը: Ժողովի մնայուն դիւանի անդամներ ընտրուեցան
ատենապետներ՝ եղբայրներ Սարգիս Ստեփանեան եւ Պետիկ
Տէր Վարդանեան, ատենադպիր՝ եղբ. Վարդգէս Վարդան-
եան:

Ժողովը առաջին հերթին ունկնդրեց տասը մասնաճիւղե-
րու միամեայ նիւթա-բարոյական տեղեկագիրները եւ ապա՝
Երջանային Վարչութեան միամեայ գործունէութեան նիւ-
թաբարոյական տեղեկագիրը:

Համաձայն տեղեկագիրներու, չրջանը ունեցած է բազմա-
բեղուն գործունէութիւն: Ներկայիս ՀՄ.Ը.Մ.Ի Արեւելեան
Երջանը ունի.-

- 1200է աւելի անդամ-անդամուհիներ:
- 450է աւելի գայլիկ-արծուիկ, արի-արենոյշ, պատանի եւ
պարմանուհիներ:
- 600է աւելի մարզիկ-մարզիկուհիներ:

- 75է աւելի մարզական երկսեռ խումբեր՝ Ֆութպոլի, վո-
լիպոլի, պասքեթպոլի, փինկ-փոնկի, թենիսի եւ աթլէթի, ծիւ,
փոքր, կրտսեր, երէց եւ վեթերան դասակարգերով:

Անցնող տարի, չրջանը ունեցած է հետեւեալ ձեռնարկնե-
րը.-

- Մասնաճիւղերու վարչական կազմի դիւաններու խորհրդ-
դաժողով, Նիւ Շիքակոյի մէջ:
- Միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղեր, Շիքակոյի
մէջ: Խաղերուն մասնակցած են 450 մարզիկ-մարզիկուհիներ:
- Երջանային սկաուտական 22րդ ընդհանուր բանակում,
Հ.Յ.Դ. «Հայաստան» բանակավայրին մէջ, նախաձեռնու-
թեամբ Երջանային Սկաուտ. Խորհուրդին, հիւրընկալու-
թեամբ Փրովիտընսի մասնաճիւղին, մասնակցութեամբ 110
սկաուտներու:

Ներկայացուցչական ժողովը շարունակեց իր աշխատան-
քը, մշակելով յառաջիկայ տարուան մարզական եւ սկաուտա-
կան իր ծրագիրները, յատկապէս 2008ի միջ-մասնաճիւղային
19րդ մարզախաղերը Յուլիս 4ի շաբաթավերջին, Փրովիտընսի
մէջ եւ չրջանի սկաուտական 23րդ ընդհանուր բանակումը
Օգոստոս 2009ին: Ժողովը կատարեց շինիչ առաջարկներ եւ
թեւադրանքներ՝ վերոյիշեալ ձեռնարկները յաջողութեամբ
պսակելու եւ նոր սերունդի պահանջները լաւագոյնս գոհացը-
նելու համար:

Ժողովի ընթացքին վերամշակուեցան չրջանի ներքին,
սկաուտական եւ մարզական կանոնադրները:

Երջանային Ներկայացուցչական ժողովի ուշադրութեան
առարկաները դարձան նաեւ համա-ՀՄ.Ը.Մ.ական յառաջի-
կայ մարզախաղերը, որոնք տեղի պիտի ունենան 2009ի ամ-
բան, Հայաստանի մէջ:

(Շար.ը՝ էջ 40)



690 ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇՆԵՐ ԿԸ ՄԱՄՆԱԿՅԻՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵԻՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ 2008Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ

- ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ՝
ՍԵՓԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ



Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

10 -16 Օգոստոս 2008ին, Հ.Մ.-
Ը.Մ.Ի Թեքոյա բանակա-
վայրին մէջ մեծ յաջողու-
թեամբ իրագործուեցաւ Արեւմտեան Մ.

Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտա-
կան ճրգ ընդհանուր բանակումը, մեծ
ոգեւորութիւն ստեղծելով մասնակից-
ներուն եւ ղեկավարներուն մօտ: Ամ-
բողջ եօթը օրեր, բնութեան հեռաւոր
այդ անկիւնը հալկական շունչ ստացաւ,
ազգայնացաւ եւ իր հրաշալիքներով
անջնջելի յիշատակներ ձգեց մասնակից-

ներուն մօտ: Պատմական շաբաթ մը, որ
Հ.Մ.Ը.Մ.ականներուն տարիներու երա-
զանքը իրականութիւն դարձուց՝ եզակի
այս նախաձեռնութիւնը կատարելով
միութեան սեփական բանակավայրին
մէջ:
Ուրբաթ, 15 Օգոստոսը այցելութեան
օր էր: Բանակումի զուարթ մթնոլոր-





տին բաժնեկից դառնալու համար բանակավայր փոխառնելու էին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ՝ Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեանի եւ Աշոտ Քհնյ. Գամպուրեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գոգո Պալեան, Հ.Մ.Ը.Մ.ի Նախարարեան 33րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վահագն Թովմասեան, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութեանց կազմերը, անցեալի խմբապետ-խմբապետուհիներ եւ բազմաթիւ այլ հիւրեր, որոնք ծանօթացան բանակավայրի բաժիններուն, բանակողներու աշխատանքներուն, հիւրասիրուեցան ընթրիքով եւ մասնակից դարձան բանակումին աւարտը յատկանշող դրօշակի վերջին արարողութեան:

Դրօշակի արարողութիւնը վարեց Շրջանային փոխ խմբապետ եղբ. Արի Պոյաճեան, որ առաջին հերթին բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ներ-

կայացուց օրուան հիւրերը եւ ղեկավարեց յայտագիրը, որուն առաջին բաժնով յանձնուեցան «Դէպի Ազատութիւն» ազգային շքանշանները այն 21 թեկնածուներուն, որոնք հայոց պատմութեան 1850-1910 ժամանակաշրջանը ընդգրկող դասընթացքներուն հետեւած, պահանջուած գործնական բաժինը կատարած եւ համապատասխան քննութիւնները յաջողութեամբ աւարտած էին: Ծրագրի պատասխանատուն էր Շրջանային փոխ խմբապետուհի քոյր Մարուշ Տէկիրմէնճեան:

Ապա, տեղի ունեցաւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» կրօնական շքանշանի տուօթիւն: Ծրագրի պատասխանատուն էր Շրջանային խմբապետուհի քոյր Թայլին Հինտոյեան: Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ իրեն ընկերակցող հոգեւոր հայրերը կրօնական յատուկ արարողութեամբ օրհնեցին շքանշանները, որոնց արժանացան ութ քոյր-եղբայրներ:

Այնուհետեւ, Շրջանային փոխ խմբապետ եղբ. Լեւոն Գասպարեանի

գլխաւորութեամբ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կեանքէն ներս ցարդ իրականացած բարձրագոյնը՝ վկայեալ կարգի պէճերու տուօթիւնը, որուն արժանացան 15 քոյր-եղբայրներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Պրըպէնքի «Սիփան» մասնաճիւղէն եղբ. Մեհուա Խչումեան եւ քոյր Նայիրի Մանուկեան ստացան միաւորի խմբապետ-խմբապետուհի պաշտօններ: Անոնք վերանորոգելով սկաուտական իրենց երգումը, հրապարակաւ խոստացան գիտակցիլ իրենց պաշտօնի կարեւորութեան եւ կատարել պահանջուած պարտականութիւնները, լաւագոյն ձեւով ծառայելով սկաուտութեան: Երգումը ընդունեց եղբ. Հրայր Պոյաճեան, ընկերակցութեամբ քոյր Թայլին Հինտոյեանի:

Շրջանային Սկաուտ. Խորհուրդի կողքին, բանակումի յաջողութեան իրենց առաւելագոյն նպաստը բերած ըլլալուն համար, յատուկ զնահատանքի արժանացան քոյր Դուլին Վարդանեան («Սարդարապատ» մասնաճիւղէն), եղ-



բայրներ Անտրեյ Զաբարեան («Արարատ»), Անդրէաս Հինտոյեան (Աոս Անճեղս), Ժիրօ Թաթիկեան («Ազատամարտ») եւ եղբ. Վիգէն Մանուկեան («Միփան»):

Յատուկ գնահատանքի արժանացան նաեւ եօթը հոգի է բաղկացած բանակումին օժանդակ մարմինը եւ յատկապէս՝ եղբայրներ Փիէր Մանուկեան, Արա Սարաֆեան եւ բանակավայրի հոգատար Ճորճ Մուհամմէտ, որոնց յանձնուեցաւ բանակումը յատկանշող յատուկ շապիկը:

Բացառիկ գնահատանքի արժանացաւ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի գործավար եղբ. Նորայր Թահմազեան, որ բանակումին ամբողջ ընթացքին բացառիկ գործակցութիւն ցուցաբերեց եւ այդ առիթով եղբօր յանձնուեցաւ պատասխանատուներու կողմէ ստորագրուած բանակումի փոքր դրօշը:

Շրջանային Սկաուտ-Խորհուրդի կողմէ ելոյթ ունեցաւ եղբ. Հրայր Պոյաճեան: Ան առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց Շրջ. Վարչութեան եւ յատկապէս Շրջանային Սկաուտ-Խորհուրդի մօտ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ եղբայրներ Զարեհ Մովսէսեանին եւ Պերճ Պետոյեանին, որոնք միշտ ամբողջական գորակցութիւն ցուցաբերած են շրջանի սկաուտական աշխատանքներուն եւ հրաւիրեց բանակումի մասնակից եղբ. Մովսէսեանը, փոխանցելու իր պատգամը:

Եղբ. Մովսէսեան շնորհաւորեց յաջողութեամբ պսակուած բանակումին աւարտը եւ այս առթիւ սկաուտական շքանշաններու եւ պաշտօններու արժա-

նացած քոյր-եղբայրները: Եղբայրը յատկապէս բարձր գնահատեց Շրջանային Սկաուտ-Խորհուրդն ու բանակավայրի յանձնախումբը, բանակումը լաւապէս կազմակերպելուն եւ զայն բացառիկ յաջողութեամբ իրագործելուն համար:

Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Եղբայրը երախտագիտութեամբ յիշեց հանգուցեալ եղբ. Երուսնդ Սիսեանը, որուն կտակին շնորհիւ կարելի դարձաւ բանակավայրին սեփականութիւնը: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի նախկին Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Մհեր Դաւիթեանին եւ Մանուէլ Մարսէլեանին, ներկայ Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանին, Շրջանային Սկաուտ-Խորհուրդին, բանակավայրի յանձնախումբին եւ Շրջանային Վարչութեան իր գործընկերներուն, որոնց անսահման աջակցութեան, տեսչականին ու քաջութեան շնորհիւ, բանակավայր մը ունենալու մեծ ծրագիրը իրականացաւ: Ապա, Շրջանային Վարչութեան անունով գնահատագիրներ յանձնեց Շրջանային Սկաուտ-Խորհուրդին, առ ի երախտագիտութիւն շրջանի սկաուտական ծրագիրներու իրագործման, բոլորին երազանքը իրականացուցած Թեքոյա բանակավայրի ծառայութեան եւ բանակավայրի հոգածութեան յանձնուած սերունդներու դաստիարակութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով գնահատանքի իր խօսքը փոխանցեց եղբ. Գօգօ Պալեան, որ շնոր-

հաւորեց Շրջանային Վարչութիւնը եւ յատկապէս Շրջանային Սկաուտ-Խորհուրդն ու բանակավայրի յանձնախումբը, որոնց տքնաշան աշխատանքին արդիւնքն էր բանակավայր մը ունենալու տարիներու երազանքը: Եղբայրը երանի տուաւ բոլոր բանակողներուն, որոնք վայելեցին գեղեցիկ այս բանակավայրը եւ վստահեցուց զանոնք, որ վաղը շատ լաւ յիշատակներով պիտի բաժնուին իրարմէ:

Գեղեցիկ այս ծրագրի վերջին բաժնով գնահատանքի արժանացան բանակումի լաւագոյն այն խմբակները, որոնց վրանները ամբողջ բանակումի ընթացքին միշտ մաքուր եւ գեղեցկագոյն ձեռագրին աշխատանքներով զարդարուած էին:

Արարողութիւնը վերջ գտաւ դրօշակի տպաւորիչ արարողութեամբ: Գեղեցկօրէն պատրաստուած դրօշակի կայմին վրայ ամբողջ շաբաթ մը ծածանող Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Գալիֆորնիոյ եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշները իջան՝ նշելով բանակումին աւարտը:

Այնուհետեւ բանակողներն ու հիւրերը հիւրասիրուեցան ընթրիքով: Նոյն գիշերը տեղի ունեցաւ բանակումին վերջին խարուկահանդէսը, որուն իր մասնակցութիւնը երգիչ Գառնիկ Սարգիսեան:

Շաբաթ, 16 Օգոստոս 2008ի առաւօտեան, պաշտօնապէս իր աւարտին հասաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Ծրագրի ընդհանուր բանակումը, քաղցր յիշատակներ արձանագրելով մասնակիցներուն մօտ:

ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՈՒԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԼԷՆՏԷՅԼԻ «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՂԻՆ 30ԱՄԵԱԿԸ

«Արարատ» մասնաճիղի հանրային կապի թղթակից ԿԼԷՏԷՅԼ

Որքան Արարատ լեռը սիրելի է ու հարազատ հայր-թեան սրտին, մինչև պաշտամունքի աստիճան, նոյնքան այդ անուան հետ կապուած Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիղը հարազատ է Կլէնտէյլի համայնքին եւ գուրգուրանքի արժանի: Այդ գիտակցութեամբ, Կիրակի, Սեպտեմբերի 28ին, «Հոլ աֆ լիպլըթի» ուժով, 1000ից աւելի Հ.Մ.Ը.Մ.ականների եւ հայրենակիցների ներկայութեամբ, նշուեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիղի հիմնադրութեան 30ամեակը:

Լոս Անճելէսի հայ իրականութեան մէջ իր կարեւոր տեղն ունի Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիղը, որն 2008ին թեւակոխեց իր հիմնադրութեան եւ գործունէութեան 30րդ տարին: Յորեկեանական ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբը ամիսներ առաջ ծրագրելով բուն յայտագիրն ու նախապատրաստական աշխատանքները, յաջողութեամբ ու խնամուած կերպով իրագործեց զայն, ապացուցելով որ «Արարատ»ը արժանի է այդ լերան անունը կրելուն:

Ձեռնարկն սկսուեց երեկոյեան ժամը 6.30ին, Տէրունական աղօթքով ու Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի օրհնութեամբ ու ողջոյնի խօսքով: Սրբազան Հայրն շնորհաւորելով 30ամեակը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիղը գաղութին է ներկայացել իրագործման եւ նուիրումի իր աշխատանքներով: Ապա, մասնաճիղի



ղի «Արարատ» երգչախումբը՝ Ալենոյշ Եղնազարի խմբավարութեամբ, հնչեցրեց Ա.Մ.Ն.Ի եւ Հայաստանի քայլերգները:

Բուն ծրագիրն սկսեց մասնաճիղի սկստական բաժանմունքի 30ամեայ պատմութեան բացատրութիւններով ու գայլիկների, արծուիկների, արինների եւ արեւոյշների տողանցքով, որոնց յաջորդեցին ընդհանուր մարզական եւ պասքեթպոլի բաժանմունքների զանազան մարզաճիւղերի աշխատանքների ծանօթացումը: Բեմը աշխոյժ էր՝ մեծ թուով կրտսերների, պատանիների ու երիտասարդների ներկայութեան շնորհիւ, որոնք մեր համայնքի գալիք սերունդն են եւ նրանց ուսերին է դրուելու համայնքը ղեկավարելու ծանր պարտականութիւնը:

Մասնաճիղի մշակութային բաժանմունքի «Արարատ» պարախմբի փոքրիկները, պարուսոյց ունենալով Անոյշ Մեհրանեանին, ներկայացրեցին մի պար, որից յետոյ բեմի վարագոյրի վրայ

ցուցադրուեցին սահիկներ ու կարճ տեսաժապաւէններ մասնաճիղի տարբեր աշխատանքներից: Յուցադրուեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Հայրապետերի, ազգային ու նահանգի պետական պաշտօնատար անձանց, Հայաստանից հիւրերի եւ մարզիկների այցը մասնաճիղի կենտրոնները:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիղը սկզբնական իր փոքրիկ հաւաքատեղին փոխարինելով նորով, այժմ ունի յարմարաւէտ եւ բանուկ երկու կենտրոնատեղիներ Կլէնտէյլում, ու շուրջ 2500 իր անդամներով այսօր հանդիսանում է Հ.Մ.Ը.Մ.Ի ամենամեծ մասնաճիղը: Յուցադրուած աշխատանքներում զգալի էր մասնաճիղի երէցների բաժանմունքի նուիրեալ անդամների ժրջան աշխատանքը:

Օրուայ խօսքով բեմ բարձրացաւ քոյր Լինա Դաւթեանը, որը շնորհակալութիւն յայտնեց մասնաճիղին թիկունք կանգնած բոլոր հովանաւորներին:



րին ու հայ համայնքին, վերջում ներկայացնելով ձեռնարկին պաշտօնական հանգամանքով ներկայ գտնուող անձանց՝ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Ը.Մ-ի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան, Նայիրի Նահապետեան, Կրէկ Գրիգորեան, Սքաթ Տրոյէթ «Joeline Wagner School District Board»-ից եւ Լիա Քանեան «Forest Lawn»-ից, Գալիֆորնիոյ Ծերակոյտի ներկայացուցիչ Փոլ Գրիգորեան եւ Կլէնտէյլի քաղաքային խորհուրդի անդամներ Պոպ Եոուէֆեան եւ Արա Նաճարեան:

Բեմ բարձացաւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Աբրահամեանը եւ յաջորդաբար զնահատանքի ուղերձներ ստանձնեց քոնկրէսական Ատամ Շիֆի, սենաթոր ձէք Սքաթի, Լոս Անձելլասի ոստիկանապետ Լիրոյ Տ. Պաքայի, Մայքըլ Անթոնովիչի, Գալիֆորնիոյ Ծերակոյտի ներկայացուցիչ Փոլ Գրիգորեանի եւ Կլէնտէյլի քաղաքային խորհուրդի անդամներ Պոպ Եոուէֆեանի եւ Արա Նաճարեանի կողմից:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան շրջանի Երջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբայր Սթիւ Արթինեանը, որը տեղեկացնելով որ վերջերս Մոսկուայում հիմնադրուել է Հ.Մ.Ը.Մ-ի 100րդ մասնաճիւղը, նշեց որ Հ.Մ.Ը.Մ-ի փայ-

լուն աստղը Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղն է, որը հայեցի մթնոլորտում սպասարկել ու սպասարկում է հազարաւոր երիտասարդների:

Ողջոյնի խօսք ասաց նաեւ Գալիֆորնիոյ Ծերակոյտի ներկայացուցիչ Փոլ Գրիգորեանը նշելով, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր փոքրիկ ղերն ունի նահանգի զարգացման ու յառաջխաղացման գործում: Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին յանձնուեց եւս մի յուշագիր՝ սենատոր ձէք Սքաթի կողմից:

Ընթերցուեց Թեհրանից ստացուած Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան Կենտրոնական Վարչութեան շնորհաւորանքի խօսքը:

Ձեռնարկի ընթացքում, իւրաքանչիւր բաժանմունքի պատմական ու ներկան ներկայացուելով, կարեւորութեամբ նշուեց երէցական բաժանմունքի գործունէութիւնը, որը հիմնադրուելով 25 տարի առաջ, զանազան հաստատութեքեր ձեռնարկներով յանձն է առել մասնաճիւղի նիւթական ծանր բեռի խոշոր բաժինը, յատկապէս մասնաճիւղի կենտրոնների գնման ու նորոգման գործում, եւ որպէս «մտածող ծնող ու փորձառու ղեկավար» անփոխարինելի ղեր ունի ընդհանուր աշխատանքներում:

Մրազրի յաջորդ բաժնում եղաւ

մասնաճիւղի կրթաթոշակների բաշխում՝ Թալին Խեչումեանին, Նաթաշա Աֆթանղիլեանին եւ Իուէն Իւսէֆիին, իրենց դպրոցական գերազանց, ինչպէս նաեւ միութենական գործունէութեան համար:

Մրազիրը համեմուած էր նաեւ փոքրիկների մարմնամարզի գեղարուեստական ելոյթով՝ մարզիչ Օվսաննա Միսեանի ղեկավարութեամբ, պարերով, ժողովրդական պարեղանակներով ու գուսանական երգերով: Մեներգով հանդէս եկան Հերմինէ Ամիրեանն ու Լեւիկ Խմչեանը, իսկ վերջում «Արարատ» երգչախումբը կատարեց երեք երգ, որոնք եզրափակուեցին «Յառաջ

նահատակ»ով:

Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի կատարած գործը մեծ է ու արժէքաւոր, իսկ նոր սերնդի գերակշռուող ներկայութիւնը աշխատանքներում՝ աշխուժութիւն բերելով շարունակական գործին, յուսադրիչ է ու հեռանկարային: Բնականաբար յրբեք նահանգի ձեռնարկը ինքնանպատակ չէր: Սեպտեմբերի 28ին մեծարուեց Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղը, այն գիտակցութիւնից ելնելով, որ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը մի-մի սիւներն են մարմնակրթական մեծ միութեան:

Ասում են Ձուարթնոցի գմբէթը հիմնուած է եղել 36 սիւների վրայ: Ասում են, երբ փլել է ամէն մի սիւն՝ փլել է կառուցուածքի պատկան բաժինը եւ ի վերջոյ՝ ամբողջ գմբէթն ու շէնքը: Մեծարումն տեղի ունեցաւ միասին զգալու եւ մէկ անգամ եւս շեշտելու համար կարեւորութիւնն այն հարցի, որ անհրաժեշտ է հաստատ մնայ ամէն մի սիւն, որպէսզի հաստատ մնայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան տան գմբէթը, որպէսզի միշտ կանգուն ու հաստատ մնայ Հայ ժողովրդի երկնակամարը:




Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՈՒԷՏԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ ՄԿԱՌԲՏԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԸ

Լեւոն Շամլեան ՎԵՍՍԹԵՐՈՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Շուէտի մասնաճիւղին սկառտական երկօրեայ սեմինարը տեղի ունեցաւ 27-28 Դեկտեմբեր 2008ին, Վեսթերոս քաղաքի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ: Սեմինարին նպատակն էր մասնաճիւղին անդամներուն փոխանցել սկառտական եւ ազգային գիտելիքներ:

Սեմինարին մասնակցեցան 18 քոյր-եղբայրներ, որոնք հակառակ Շուէտի ազատ կրթութեան, հնազանդ եւ ճիշդ ձեւով հետեւեցան իրենց փոխանցուած բոլոր հրահանգներուն: Զգալի էր, որ մասնակիցներուն ազգային գիտակցութիւնը եւ



սկառտական ոգին բարձր էր:

Սեմինարին յայտագիրը եղաւ այլազան: Երկու օրուան ընթացքին կատարուեցան հետեւեալները.-

- Սկառտութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մասին դասախօսութիւններ:
- Ազգասիրութեան, հայոց պատմութեան եւ պահանջատիրութեան մասին զրոյցներ:
- Մարզանք եւ ինքնապաշտպանութեան փորձեր:
- Սկառտական հրահանգներու փորձեր:
- Երգերու եւ կանչերու ուսուցումներ:
- Նոր Տարուան ձեռագիրն աշխատանքներու պատրաստութիւններ:

Սեմինարը պսակուեցաւ յաջողութեամբ եւ այդ յաջողութեան մէջ իր մեծ դերը ունեցաւ եղբ. Հայրենիք Յովսէփեան, որ ծանր աշխատանք կատարեց Շուէտի հայ երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ համախմբելու համար:



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՐԵՅԱԶՈՂ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՄԸ ՄԿԻԶԲԸ

Մարիա Չոլաքեան ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ-ի Պուրծ Համուտի մասնաճիւղի 2008-2009 տարեշրջանի սկստուտական վերամուտը տեղի ունեցաւ Կիրակի, 12 Հոկտեմբեր 2008ին: Այս առիթով, առաւօտեան հաւաքի աւարտին, սկստուտական բոլոր խումբերը ուղղուեցան Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի՝ ներկայ ըլլալու Պատարագի եւ վերամուտը սկսելու Ս. Հաղորդութեամբ:

Վերամուտի հանդիսութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4ին եւ սկսաւ տողանցքով: Մասնաճիւղին սկստուտական բոլոր խումբերը, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին առաջնորդութեամբ, Պուրծ Համուտի քաղաքապետարանի դաշտէն տողանցեցին Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան Քոլէճի դաշտ, ուր տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն եղանակներով:

Հանդիսութեան ներկաներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան, Պուրծ Համուտի քաղաքապետին ներկայացուցիչը, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետը, Շրջանային Սկստուտ. Խորհուրդի

ներկայացուցիչը, Շրջանային Խմբապետութիւնը, Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան քոլէճի տնօրէնը, մասնաճիւղի նախկին խմբապետներ, պատկան մարմիններու եւ հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներ եւ ծնողներու մեծ թիւ մը:

Հանդիսութեան սկիզբը կատարուեցաւ աստիճանատուչութիւն: Ապա, խօսք առաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Հրայր Յերմանեան: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութենէն 90 տարի ետք տակաւին չէ փոխուած միութեան ուղին եւ առաքելութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ի Պուրծ Համուտի մասնաճիւղը, այլ մասնաճիւղերու կողքին, ունեցած է իր իւրայատուկ տեղն ու ներդրումը, քանի որ կը գտնուի սփիւռքահայութեան սիրտը հանդիսացող շրջանին մէջ:

Եղբայր ատենապետին խօսքին յաջորդեց գեղարուեստական յայտագիրը, որուն ընթացքին մասնաճիւղին տարբեր խումբերը պարերով, երգերով եւ թատերական ներկայացումով ներկաներուն ծանօթացուցին Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհատարած մասնաճիւղերուն պատմութիւնն ու գործունէութիւնը:

Հանդիսութեան աւարտին ցուցադրուեցաւ մասնաճիւղին տարեկան բանակումին տեսերիզը, ապա տեղի ունեցաւ 90ամեակի կարկանդակի հատում, հիւրասիրութիւն եւ հրավառութիւն:





ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՅԺ ԿԵԱՆՔ՝ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ



**Ալին Պեճեկեան,
Աստղիկ Գարագաշեան,
Օրելի-Արաքս Անտոնեան
ԱՄՄԱՆ**

Անցնող ամիսներուն, Հ.Մ.Ը.Մ-ի Ամմանի սկսուողական կազմը ունեցաւ աշխոյժ գործունէութիւն: Սեմինարներ, արտաակմբային աշխատանքներ եւ արշաւներ ստեղծեցին խանդավառ մթնոլորտ՝ մասնաճիւղին շուրջ խմբելով մեծաթիւ քոյրեր եւ եղբայրներ:

Մասնաճիւղին աստիճանաւորական քարերը գորացնելու համար, խմբապետական կազմը կազմակերպեց երկօրեայ սեմինար մը ակումբին մէջ: Սեմինարին առաջին անգամ ըլլալով մասնակցեցան Բ. կարգի ապագայ պատասխանատուները: Այս առիթով, իմբապետներու եւ Վարիչ Առաջնորդներու պատրաստած ու ներկայացուցած նիւ-

թերը եղան հետեւեալները:-

- **Խմբային աշխատանք մը յաջողցնելու ձեւեր.**
 - **Լաւ դեկավարը.**
 - **Հ.Մ.Ը.Մ-ի ի՞նչ կը ներկայացնէ մեզի համար.**
 - **Արդիւնաւէտ եւ յաջող ժողովներ.**
 - **Սկսուողական ձեռնարկները եւ դաստիարակչական աշխատանքները նոր եւ գրաւիչ ձեւերով պատրաստել.**
- Սեմինարին ընթացքին, մասնակից քոյր-եղբայրներուն շեշտուեցաւ իրենց ուսերուն դրուած ծանր պատասխանատուութիւնը: Անոնց նուիրեալ աշխատանքին անդրադառնալով, վերահաստատուեցաւ, թէ ազգային եւ միութենական դաստիարակութիւն փոխանցելու եւ ազնիւ նկարագրի տէր անհատներ պատրաստելու համար պատասխանատու կազմը պէտք է ներկայացնէ լաւագոյն օրինակը:

Սեմինարին նիւթերը ներկայացուցան խաղերու եւ կլոր սեղաններու միջոցով: Սեմինարին ներկայ եղաւ նաեւ մասնաճիւղի նախկին խմբապետուհի քոյր Արսինէ Ճամպագեան, որ բարձր գնահատեց խմբապետական կազմին աշխատանքը՝ արդիական մօտեցումներով ներկայացնելու սկսուողութեան նպատակը:

Սեմինարին աւարտին, մասնակից քոյր-եղբայրները ուղղուեցան լողաւազան, միասնաբար հաճելի օր մը անցուցին եւ տուն վերադարձան աշխատանքի նոր գաղափարներով:

Այս սեմինարին կողքին, մասնաճիւղին խմբապետական կազմը ծրագրեց նաեւ շարք մը այլ աշխատանքներ՝ սկսուողները դուրս բերելու համար ակմբային սահմաններէն եւ թափ տալու համար բնութեան մէջ կատարուող գործնական աշխատանքներու:

Այս իմաստով, գայլիկական բաժանմունքը օր մը անցուց Յորդանանի ձիարշաւի կեդրոնը: Գայլիկները պտտեցան ձիարշաւարանի գանազան բաժինները եւ առիթ ունեցան ձի հեծնելու եւ խանդավառ օր մը անցընելէ ետք իրենց տունները վերադառնալու:

Գայլիկները ունեցան նաեւ միօրեայ բանակում՝ տարուան ընթացքին փոխանցուած տեսական գիտելիքները գործադրելու համար: Բանակումին ճոխ յայտագիրին նիւթերէն մէկը եղաւ Հայկական Յեղասպանութիւնը: Գայլիկները ունեցան խորոյկ եւ խմբային գանազան խաղեր: Յաջորդ առաւօտեան, անոնք ակումբէն քալելով ուղղ-





ուեցան մայրաքաղաքի ամենահին ու նշանաւոր ճաշարաններէն մէկը նախաճաշի համար: Բանակումը շատ յաջող անցաւ եւ նոր Փոխ Առաջնորդներու առիթ տուաւ խմբակներու հետ աշխատիլ եւ փորձառութիւն ձեռք ձգել:

Մասնաճիւղին սկառուները, իրենց կարգին, ունեցան 15 քերտեթր երկրորդութեամբ երկու արշաւ: Անոնք եւս այցելեցին Յորդանանի ձիարշաւի կեդրոն,

կազմակերպեցին պասքեթպոլի եւ ճաշ եփելու մրցումներ:

Աստիճանաւոր քոյր-եղբայրներու ընկերակցութեամբ, կազմին օժանդակ յանձնախումբը եւ Ա. եւ Բ. կարգի սկառուները ունեցան 20 քմ. երկարութեամբ շատ հետաքրքրական հեծելարշաւ մը՝ դէպի Յորդանանի անտառներով լեցուն հիւսիսային շրջանը:

Իրենց պատասխանատուներուն

հետ, սկառուները ներկայ գտնուեցան պոլինկի: Խաղին մասնակցող վարպետ քոյր-եղբայրներու կողքին կային նաեւ խաղին նոր ծանօթացող սկանակներ: Խանդավառ ու զիրար գերազանցելու ճիգերը անպակաս էին, միջնորդող զուարճալի եւ խրախուսիչ, արդիւնքը՝ գոհացուցիչ:

ԱՄՄԱՆԻ ՄԱՄՆԱԾԻԴԻՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒԲՄԸ



Լուսին Գուլաքըզեան ԱՄՍԱԼ

Հ.Մ.Ը.Մ-ի Ամմանի մասնաճիւղին սկառուական տարեկան բանակումը տեղի ունեցաւ 29 Սեպտեմբեր-3 Հոկտեմբեր 2008, մայրաքաղաքէն 1.5 ժամ հեռավորութեան վրայ գտնուող Շաթանա գիւղին մէջ, մասնակցութեամբ 50 գայլիկ-սկառուներու:

Շաթանան Յորդանանի հիւսիսը, Իրպիտի մարզին մէջ գտնուող լեռնային հիւսիսային շրջան մըն է, ուր նախապէս Հ.Մ.Ը.Մ. կատարած է ձմեռնային բանակում: Բանակավայրը կը գտնուի գիւղին լատիններու վանքին մէջ:

Տարեշրջանին ընթացքին, բանակումին պատրաստուելով, Հ.Մ.Ը.Մ-ի սկառուները Շաթանայի գիւղացիներուն համար հաւաքած էին հագուստներ: Գիւղացիները մեծ ջերմութեամբ ընդունեցին Հ.Մ.Ը.Մ-ի սկառուները իրենց գիւղին մէջ:

Մասնաճիւղին աստիճանաւորական քատրերը զօրացնելու նպատակով, խմբապետական կազմը եւ Ա. կարգի սկառուները օր մը առաջ ուղղուեցան բանակավայր, երեկոյեան յայ-

տազիրը անցընելով բանակավայրի պատրաստութեամբ: Յաջորդ երեկոյեան, բանակավայր հասան կազմին մնացեալ արի-արեւոյշները եւ գայլիկները: Բանակումին մասնակցեցան «Կարս», «Արծիւ», «Վազը» եւ «Գայ» գայլիկական խմբակները, «Վան», «Մուշ», «Արաքս» սկառուական խմբակները եւ մասնաճիւղին պատասխանատու կազմը:

Բ. կարգի սկառուները բանակումին առօրեայ աշխատանքներուն մէջ ստանձնեցին բաւական պատասխանատուութիւններ, ինչ որ առիթ տուաւ իրենց մօտէն ծանօթանալու իրենց կարողութիւններուն եւ պարզելու իրենց ձիրքերը:

Գայլիկ եւ սկառու բաժանմունքները ունեցան իրենց յատուկ յայտագիրները: Նիւթերով, արշաւով, խմբային խաղերով, ձեռնային աշխատանքով եւ համեղ ճաշերով լեցուն էր բանակումը: Դաստիարակչական յայտագիրը շատ ճոխ էր: Ան ընդգրկեց զանազան դասախօսութիւններ՝ հետեւեալ նիւթերով.՝ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններ, Արցախը այսօր, Հայաստանի աշխարհագրութիւն, աշխարհի կլիմայ եւ ջուր, կենսոլորտի հարցեր, նախնական դարմանում, օճախ վառել եւ նշանաւոր հայերու մասին տեղեկութիւններ:

Բանակումը աւարտեցաւ աւանդական խորուկահանդէսով, որմէ առաջ տեղի ունեցաւ աստիճանատուութիւն: Այս առիթով, «Վան» խմբակը երգում տարով անցաւ սկառուական շարքեր:

Կրտսեր գայլիկները իրենց ծնողներուն հետ ճամբելէ ետք, յաջորդ օր յայտագիրը շարունակուեցաւ մինչեւ երեկոյեան: Բնութեան հրաշալի գիրկին մէջ, հինգ օր շարունակ, Հ.Մ.Ը.Մ-ի սկառուները ապրեցան ընտանեկան ոգիով եւ դաստիարակչական աշխատանքներով լեցուն պահեր: Անոնք տուն վերադարձան սկառուական նոր տարեշրջանը նոր թափով եւ խանդավառութեամբ սկսելու վճռակամութեամբ:

ԵՂԲ. ԼԵՒՈՆ ԷՍՄԷՐԵԱՆԻ ԿՈՐՈՒՄՏԸ



Արմեն Քեօզկերեան ՅԱԼԷՊ

Վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու տերեւաթափը կը շարունակուի Հայկալի մէջ: Հաւատաւոր միութեանական մըն ալ կորսնցուց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ընտանիքը՝ եղբ. Լեւոն Էսմէրեանի մահով:

Եղբ. Լեւոն Էսմէրեան ծնած էր 1937ին, Թէլ Ապիտա: Նախնական ուսումը ստացած է Ռաս Իւլ Այնի, ապա՝ Հայկալի Ամերիկեան Քոլէճին մէջ: Փոքր տարիքէն Հ.Մ.Ը.Մ.ի Ռաս Իւլ Այնի մասնաճիւղին անդամակցելով, ան եղած է գայլիկ, սկաուտ եւ Ֆութպոլիստ:



Համեստ նկարագիրով եղբ. Լեւոն միշտ վայելած է իր շրջապատին յարգանքը: Ամուսնացած է եւ բախտաւորուած երեք զաւակով՝ Յովիկ, Վրէժ եւ Նազիկ, որոնք մինչեւ օրս կը ծառայեն իրենց հօր պաշտած միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

Եղբայր Լեւոն իր ողջ էութեամբ նուիրուած էր ազգին եւ հայրենիքին ծառայութեան: 1971էն 1976 ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի վարչութեան ատենապետ: Այդ տարիներուն եւ այնուհետեւ, մինչեւ իր մահը, եղբ. Լեւոն հանդիսացած է նուիրեալ աշխատանքի տիպար մը, օրինակ դառնալով Հ.Մ.Ը.Մ.ական գալիք սերունդներուն: Յարգանք իր վաստակին ու յիշատակին:



ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Այսու կու գամ երախտագիտական զգացումներս յայտնելու Յ.Ս.Ը.Մ.ին, որուն 90ամեակի տօնակատարութեան առիթով, Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ պարգեւատրուեցայ «Ծառայութեան» շքանշանով:

Կեանքիս երկար տարիներու ընթացքին բազմաթիւ անգամներ բեմ բարձրացած էի տարբեր առիթներով, որոնցմէ վեցը՝ ուսման զանազան մակարդակներով վկայական ստանալու համար: Եթէ անոնք կու գային հաստատելու եւ վկայելու ստացած ուսումս եւ արձանագրած յաջողութիւնս, ապա այս մէկը զնահատելու համար էր միութեան մատուցած ծառայութիւններս:

Հետեւաբար, երախտագիտական խօսքս կը հասցեագրուի երեք ուղղութեամբ: Առաջինը կ'երթայ անոնց, որոնք պատանեկան քայլերս առաջնորդեցին, երբ իբր անդամ մուտք գործեցի Յ.Ս.Ը.Մ.ի մարզական մեծ ընտանիքէն ներս: Երկրորդը՝ Յ.Ս.Ը.Մ.ական այն եղբայրներուն, որոնք զիս դաստիարակեցին՝ մրցելու մարզական ոգիով ու ապրելու ծառայասիրութեան պատրաստակամութեամբ: Իսկ երրորդը՝ անոնց, որոնք առիթը ընծայեցին միութեան ծառայական ներդրումս ունենալու:

Մաղթանքս է, որ Յ.Ս.Ը.Մ.ը թեւակոխէ յաջորդական բազմաթիւ ամեակներ, միշտ արձանագրելով մարզական պատուաբեր յաջողութիւններ:

Երախտագիտական ջերմ զգացումներով՝

ԳԵՈՐԳ ԳԱՐԱՊՈՅԱՃԵԱՆ

ԲԱՐԵԿԻՐԹ ԸԼԼԱՆՔ

Բ Ա Ր Ե Ի Ը

Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ



Մարդկային յարաբերութեան մէջ բարեւը կը գըրաւէ առաջին տեղը: Բարեւը նշան մըն է, թէ կը սիրենք ու կը յարգենք դիմացինը:

Ուրեմն, ծանօթ մը չբարեւելը եւ կամ անոր բարեւը չառնելը շատ մեծ վիրաւորանք կը նկատուի:

Բարեւելու բազմաթիւ ձեւեր կան, օրինակ՝ չինացիները քիթ-քիթի կը քսեն՝ իրարու բարեւելու համար:

Բարեւելու ձեւերը կը փոխուին մտերմութեան աստիճանի եւ մարդոց խառնուածքին համաձայն:

Եւրոպայի եւ քաղաքակիրթ աշխարհի ընդհանուր օրէնքն է փոխա-

դարձաբար գլխարկ հանել եւ գլուխը թեթեւ մը ծռել: Իսկ երբ մօտենանք՝ կը սեղմենք բարեկամին ձեռքը եւ կ'ըսենք տեղին ու ժամանակին պատշաճ խօսքը:



ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ՄՐՑԱՆՆԻՇՆԵՐՈՒԹ ԳԻՐՔԸ

Մրցանիչներու գիրքը («Կինէս պուք աֆ ուեքորտց») կը հրատարակուի տարին անգամ մը եւ կ'ընդգրկէ ամբողջ տարուան մը ընթացքին աշխարհի մէջ արձանագրուած մրցանիչները:

Առաջին անգամ այս գիրքը հրատարակուած է 1955ին, «Guinness» գարեջուր արտադրող ընկերութեան կողմէ, ամէնէն արագ թուչող թուչունի տեսակի մը բանավէճին առիթով: Օրին, գիրքը գտած է շատ մեծ ընդունելութիւն եւ տպուած է շատ մեծ տպաքանակով: Այնուհետեւ, ան կողուած է «Guinness» եւ սկսած է հրատարակել ամէն տարի: Ան լոյս կը տեսնէ մինչեւ օրս, մեծ ընդունելութիւն գտնելով ընթերցողներու կողմէ:






ՆԵՐԿԷ՛



ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԶԲՕՍԱՆՔԷՆ ԵՏՔ



Ալ վերջացաւ զբօսանք,
 Զինգը զանգը, զինգը զանգ:
 Ահա դասարան մտանք,
 Զինգը զանգը, զինգը զանգ:
 Շատ խաղացինք, յոգնեցանք,
 Զինգը զանգը, զինգը զանգ:
 Քիչ մըն ալ հանգստանանք,
 Զինգը զանգը, զինգը զանգ:
 Դեռ փոքր ենք, մենք կը խաղանք,
 Զինգը զանգը, զինգը զանգ:
 Երբ որ մեծնանք, կը կարդանք,
 Զինգը զանգը, զինգը զանգ:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ԿՐԻԱՆ



Կրիան կը նկատուի աշխարհի հնագոյն արարածներէն մէկը. ան 230 միլիոն տարիէ ի վեր գոյութիւն ունի: Կրիան ողնաւոր եւ սողուն կենդանի է: Ան միակ սողուն կենդանին է, որ ընդունւած է մարդուն կողմէ: Կրիան համակրելի եւ ընտանի կենդանի մըն է, որ ճանչցուած է իբրեւ դանդաղաշարժ կենդանի: Անոր կշիռքը կը տարուբերի իր տեսակին համաձայն՝ 80 քիլո-էն մինչեւ 1 թոն: Ան կ'ապրի 50-150 տարի:

Կրիային պատեանը գինք կը պաշտպանէ վտանգներէ եւ կը կշռէ իր կշիռքին երկու երրորդը: Կրիան ունի լաւ հոտառութիւն, բայց շատ սկար տեսողութիւն:

Կրիան ակռայ չունի. ան իր ուտելիքները կը խածնէ եւ կը ծամէ իր ծնօտով:

Կրիաները կը բաժնուին երկու մեծ ընտանիքի՝ ծովային եւ ցամաքային:

Էգ կրիաներու պատեանին տակի մասը տափակ կ'ըլլայ, իսկ արու կրիաներու պատեանին տակի մասը ներս մտած կ'ըլլայ:

Էգ կրիաները կ'ածեն 1-150 հաւկիթ:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
 Միսը ներսէն,
 ոսկորը դուրսէն:
 (Պատասխանը՝ յաջորդի: Նախորդ հանելուկին պատասխանն էր Արծազանգ):





Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ ավելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տեր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիլեան, Յակոբ Թըքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էիրամեան, Արթօ Մարգարեան, Տիանա Հաճեթեան, Հրանդ Տետեան, Բաբգէն Կարապետեան, Երուանդ Շահինեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Ճորճ Տաքետեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ...

(Շարունակուած՝ 27րդ էջէն)

Նկատելի եւ ուրախալի երեւոյթ էր պատգամաւորներու շարքին մեծ թիւով երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներու ներկայութիւնը, ինչ որ յաւելեալ յոյս կը ներշնչէ միութեան յարատեւութեան ու հզօրացման:

Ժողովին ընթացքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, Հ.Յ.Դ. Արեւելեան Շրջանի Կեդրոնական Կոմիտէի անդամ խափակ Մկրտիչեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Վահրամ Դանիէլեան: Խօսք առնողները

բարձր գնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայապահպանման աշխատանքին մէջ, մանաւանդ Մ. Նահանգներու այլասերիչ միջնորդութիւն մէջ, ինչ որ կը պահանջէ յաւելեալ ճիգ եւ համբերութիւն: Անոնք յաջողութեան բարեմաղթութիւններ փոխանցեցին ժողովին մասնաւորապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ին յատկապէս, որպէսի Հ.Մ.Ը.Մ.ը մնայ պատենչի վրայ եւ շարունակէ իր ազգանուէր գործունէութիւնը:



Ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով, Կիրակի, 28 Սեպտեմբեր 2008ի կէսօրէ ետք ժամը 4ին:

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- «Էն.Պի.էյ.»ի կազմերէն (երկու բառ):
- Յոյն դից - Սեւ ծովու նաւահանգիստներէն:
- Դրկից գիրեր - Հանդէս - Գաւազան:
- Ասպար - Արեւելեան իջեւան:
- Միամեայ ուլ - Ահմէտ Շասինի հիմնած շարժումը:
- Հայկական ամիսներու ԻՋ. օրը - Տապալի:
- Օժանդակութիւն - Չայնանիչ:
- Բարձրացում - Ափրիկեան երկիր:
- Կրկնուած ձայնաւորներ - Լաւատեղեակ - Սանձ:
- Քուներ խանդարուած - Ջրալի ցեխ - Այծուղտ:
- Այբուբենէն - Եգիպտական դից - Մեթան:
- Իսլամ կրօնաւոր - Խօսք մտիկ ըրէ:
- Գամ - Ամուր - Ֆրանսական քաղաք:
- Կանացի կոշական բառ - Նետի սուր ծայր - Իրերայաջորդ տառեր:
- Որկրամուլ - Թուշ - Խողովակաձեւ:
- Եչիլ Լրմաք գետի պատմական անունը - Մնողագուրկ - Պապական կոնդակ:
- Ճշմարիտ - Ստաշի, սեւ խոնկ:
- Ասիացի ժողովուրդ մը - Չոյգ - Կրկնուած բաղաձայններ:
- Հսկայ - Երէց - Վէճ, կռիւ:
- Ծաղկաման - Երկնային լուսաւոր մարմին - Շնթանք:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Սերպ թենիսիստ:
- Ժխտական մասնիկ - Հոլովակերտ մասնիկ - Արցախի լեռներէն - Դոյլ:
- Փոքր - Մարտունիի գիւղերէն - Պուպրիկ:
- Անգլիացի ֆուլթպոլիստ - Պրագիլի գետերէն - Դրկից գիրեր:
- Հոսիչ - Նաեւ - Տիեզերական Ա. ժողովին գումարման վայրը:
- Տառի մը դրացիները - Թթուածնատ - Խաղաթուղթի մէկնոց - Յուցական ածական:
- Ստոյգ, ապահով - Յուցական ածական:
- էրի եւ Սերմի եղբայրը - Պարսիկ կուսակալ - Գրաբար՝ ո՞րը - Չեռքի մաս:
- Աստուած - Ասիական երկիր - Չայլամ:
- Յուցական ածական - Տաղել - Պատշաճ - Չայնանիչ:
- Հայկական օփերա - Ժամանուած - Որոտալ - Չայնակից գիրեր:
- Կաթնաուլ - Համադասական շաղկապ - Լուիզա Ալյանեանի գրչանունը - Ամարանոց:
- Անհատ - Հայաստանի գետերէն - Կաչան - Լուցափայտ:
- Ամերիկեան մայրաքաղաք - Քուուակ - Անձնական դերանուն:
- Մորթալին բիծ - «Ֆորմիլա 1»ի նախագահը - Նմանաձայն տառեր:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														

ԹԻԲ 173 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Ք	Ո	Պ	Է	Պ	Ր	Ա	Յ	Ը	Ն	Թ			
2	Ն	Ր	Ա	Ն	Ո	Մ	Ն	Պ	Ի	Շ				
3	Ա	Ս	Տ	Պ	Պ	Շ	Ղ	Ա	Ր	Շ				
4	Ր	Կ	Ա	Ր	Է	Ն		Ա	Տ	Ա	Մ			
5	Ի	Շ	Ա	Յ	Ր		Փ	Խ	Ի	Թ	Ա	Ն		
6	Կ	Ո	Ն	Ի			Ա	Յ		Լ	Ե	Ր	Կ	
7	Մ	Յ		Մ			Մ	Ն	Ա	Ր	Տ	Ա		
8	Ո	Տ	Ն	Ա	Կ		Ա	Ս	Փ	Ո	Թ	Ո	Ր	
9	Ի	Ի	Ս	Կ		Թ	Ո	Յ	Մ	Ա	Ք	Ա	Յ	
10	Ր	Ե	Ս	Ա				Ա	Կ		Ա	Տ	Ր	
11	Ա	Ն	Տ	Ր	Է		Ա	Տ	Ի	Կ	Ա		Ո	
12	Տ		Ո	Լ			Ա	Ն	Յ		Ճ	Ե	Տ	
13	Ե	Ո	Ի	Ր	Է		Ա	Ն	Ի		Մ	Ա	Ր	Ի
14	Ա	Ն	Կ	Է	Ջ	Մ	Ո	Ր	Ն	Ի	Թ	Ո	Ն	
15	Ն	Ա		Ա	Կ		Ե	Ր	Ի	Ջ	Ա		Ի	
16		Յ	Յ	Ա	Պ	Ա	Տ	Ն	Է	Շ	Ք	Ս	Ա	Կ
17		Ջ	Է	Ն	Ք		Յ		Ի	Ր	Ա	Ն		
18		Պ	Թ	Ն	Ա		Տ	Մ	Ա	Ր	Պ	Ի		
19		Ա	Բ	Բ	Ա	Յ		Ա	Ա		Գ	Ի	Ն	
20		Կ		Գ	Մ	Ո	Ի	Մ		Ս	Ի	Ն	Ջ	

ՄԱՆՁՐԲԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՍԲ» ՍԿՍՆԱԿՑԻՆԻ ՍԿՆԱՓՏՆԵՐ

